

ՄԱՐԶԻԿ

ՀԱՆՄԱՆ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت


marzig

SPORTS MAGAZINE

Ի.Ռ. ՏԱՐԻ, 2005, ԹԻԻ 6 (276) VOL. XXIV N°6 السنة الرابعة والعشرون العدد السادس



ՀԱՄԱ- Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԴՐԻ ՄԱՐԶԱՆԱԴԵՐԸ
ԲԱՅ ԵՐԿԻՆՔԻ ՏԱԿ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱՆՄԲՈՒԹԻՒՆ



**ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆՆԵՐԻ ԿԱՍՕՔՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՍՔ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԻԿԻՈՅ**

**ՇՆՈՐՀՔ, ՄԵՐ ԵՒ ԽԱՂԱՎՈՒԹԻՒՆ Ի ՏԵՆՈՆԷ ԵՒ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԵՆՉ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱԶՈՅ ՍՐՔՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՆՈՐՉԻՆ**

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ
ԱՌ
Հ.Մ.Ը.Մ.-Ի ՄԵԾ ԸՆՏԱՆՆԻՔԸ**

Հայրապետական օրհնութեան ու քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ամբիփախ Մայրավանքէն Հայ Մարմնամաքական Ընդհանուր Միութիւնը, Արեւքի մէջ տեղի ունեցող համա-Հ.Մ.Ը.Մ.-ական 7-րդ մարզախաղերուն առիթով:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.-ը մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ իր իրաւատուկ տեղը ունեցած է, ինչպէս նաեւ իր կարեւոր նպաստը բերած՝ հայապահպանման, ազգային պահանջատիրութեան ու Հայաստանի հզօրացման համազգային առաքելութեան: Հ.Մ.Ը.Մ.-ը սովորական հասկացողութեամբ մարզական միութիւն մը չէ եղած, եւ հետեւաբար, ան ինքզինք չէ սահմանափակած մարզական գործունէութեան մեղ շրջագծին մէջ: Ան եղած է շատ անկիւն: Հ.Մ.Ը.Մ.-ը եղած է քրիստոնէական ու քարոյական արժէքներու առողջ շտեմարան, ան եղած է ազգային ապրումներու, տազմապներու ու տեսիլներու յորդանոս արքիւր, ան եղած է տակաւին համամարդկային արժէքներու ու ձգտումներու վեմն դարբնոց: Եւ այս բոլորը այնքան պերճախօսօրէն կարելի է տեսնել այս մեծ միութեան կեանքի իրաքանձիւր հանգրուանին, իրաքանձիւր երեսին եւ իրաքանձիւր արտայայտութեան մէջ:

Այս ոգիով ու հաւատքով ու մանաւանդ այն տեսիլով Հ.Մ.Ը.Մ.-ը սերունդներ դաստիարակեց, անոնց մէջ դրոշմելով հայու ինքնութիւնը վառ պահելու յանձնարարութիւնը, հայ ժողովուրդի երազներուն հաւատարմն մնալու վճռակամութիւնը եւ հոգեւոր ու քարոյական արժէքներով հայու կեանքը հարստացնելու պարտաւորութիւնը:

Այսօր Հ.Մ.Ը.Մ.-ը իր համատարած ներկայութեամբ Հայաստանն սկսեալ մեր բոլոր գաղութներէն մերս կողմէն է ինքզինք ու իր համազգային առաքելութիւնը վերանորոգելու այնպիսի մտաեզմունքով ու քարեփոխումներով, որոնք կարենան Հ.Մ.Ը.Մ.-ը պահել միշտ կենսամակ մերկայ կեանքի յարափոխութիւն պայմաններուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-ի կողմէ կազմակերպուած միջ-գաղութային ու համազգային ձեռնարկները իրենց մարզական ու ընկերային կարեւորութենէն անդին, նաեւ ազգային մեծ նշանակութիւն ունին: Անոնք մեծապէս կը նպաստեն մեր նոր սերունդի զաւակները քով-քովի բերելու, մէկ ազգի ու հայրենիքի պատկանելիութիւնը վերաշնչելու, իրենց ինքնութիւնը բիրեղացնելու եւ իրենց հաւաքական պայքարը վերանորոգ հաւատքով ու կամքով ջրղեղելու իմաստով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ եղած է քաջալիր Հ.Մ.Ը.Մ.-ին եւ այն բոլոր միութիւններուն ու կազմակերպութիւններուն, որոնք նոյն ոգիով ու հաւատարմութեամբ մեր ազգի կեանքին մէջ կը գործեն ու կը ծառայեն:

Այս առիթով, Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Կարչութեան, Շրջանային վարչութիւններուն եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.-ականներուն: Բի՛ր օրհնութիւն բոլոր անոնց, որոնք ծառայեցին Հ.Մ.Ը.Մ.-ին: Պատի՛ր՝ բոլոր անոնց, որոնք այսօր կը ծառայեն այս Մեծ Ընտանիքին ճանքով հայ ժողովուրդին:

Ողջ լերուք ի Տեր, զօրացեալ շնորհօք Մ. Հոգոյն եւ յաւեւ օրհնելալ ի Մեզ, Ամեն:

Ազգամ Ան.

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԻԿԻՈՅ**

*Տուաւ Հայրապետական Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանի Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ Վեմբիփախ, Կիւսնան
Ի 6-6 Մայիսի, 2005 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆՄԻ.*



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկները միշտ իրենց նշանակալից տեղը ունեցած են Հ.Մ.Ը.Մ.ի համափիռքեան պատմության մէջ: Մարզական, սկաուտական ձեռնարկները, մինչեւ իսկ միջ-դիւանական խորհրդածողովները խանդավառած են Հ.Մ.Ը.Մ.ի իրերայաջորդ սերունդները, կազմակերպչական յայն փորձառութիւն ընծայած են կազմակերպող շրջաններուն եւ վերանորոգ թափով աշխատանքի նոր հորիզոններ բացած են խաղերու մասնակից, թէ խաղերուն հետեւող բազմահազար Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Տարբեր չէին կրնար ըլլալ նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական եօթներորդ մարզախաղերը, որոնք անմոռանալի յիշատակներ պարգեւեցին մարզախաղերը հիւրընկալող յունահայ գաղութին:

ՄԱՐԶԱՆԱԳՐՈՒ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

Խաղերու բացման պաշտօնական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 24 Յուլիսի երեկոյեան, Աթէնքի սոֆթպոլի ողիմպիական մարզադաշտին վրայ: Հանդիսութեան ներկայ գտնուեցան պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ, Հ. Հ. դեսպանը, Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդը, ուղեկից միութեանց, Հ.Բ.Ը.Մ.ի, Թեհրանի «Արարատ» մարզա-մշակութային միութեան ներկայացուցիչները եւ մօտ 2500 համակիրներ:

Մարզախաղերուն բացումը յունարէն եւ հայերէն լեզուներով կատարեց քոյր Մարի Եղիշէեան: Ապա յաջորդեց տողանցք եւ գեղարուեստական յայտագիր՝ կենդանի պատկերներով: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼՍ

Խաղերու նախօրեակին կայացաւ մամլոյ ասուլիս մը: Իր խօսքին մէջ, Յունաստանի մարմնամարզի նախարարութեան ընդհանուր քարտուղարը դրուատեց Հ.Մ.Ը.Մ.ը եւ հայ եւ յոյն ժողովուրդներու բարեկամութիւնը: Ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ խաղերու կեդրոնական յանձնախումբին կողմէ եղբ. Պօղոս Չոլաքեան:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական եւ Յունաստանի Շրջանային Վարչութիւնները ներկայացնող պատուիրակութիւն մը, 27 Յուլիսին, այցելեց Յունաստանի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարան եւ շահեկան պրոյց մը ունեցաւ Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեանին հետ: Սրբապան հայրը շնորհատրեց Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը եւ վեր առաւ անոր ազգանունէր եւ հայանունէր գործունէութիւնը:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ

Հ.Մ.Ը.Մ.ի մէկ պատուիրակութիւնը, 29 Յուլիսին, այցելեց Յունաստանի նախագահ Գարոյոս Փափուլիասին եւ շուրջ մէկ ժամ տեւողութեամբ տեսակցութիւն մը ունեցաւ անոր հետ:

Տեսակցութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը նախագահին ներկայացուց միութեան կառույցը եւ գործունէութեան մարզերը, շնորհակալու-

թիւն յայտնելով խաղերու հիւրընկալման համար: Նախագահը, իր կարգին, անդրադարձաւ հայ եւ յոյն ժողովուրդներու դարաւոր բարեկամութեան կապերուն:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

Շաբաթ մը տեւող մարզախաղերուն խանդավառութիւնը իր լրումին հասաւ փակման հանդիսութեամբ, որ տեղի ունեցաւ Կիրակի, 31 Յուլիսի երեկոյեան, նոյն դաշտին վրայ, ի ներկայութեան Յունաստանի ներքին գործոց նախարար Փրոքրոփիս Փալոպոլոսի, Յունաստանի արտաքին գործոց նախկին նախարար Ղրիզորիս Միտթիսի, մարմնամարզի նախարարութեան ընդհանուր քարտուղար Գոսթաս Քուքրոսիմոսի, Հ. Հ. դեսպան՝ Վահրամ Կածոյեանի, Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեանի, ուղեկից միութեանց ներկայացուցիչներու եւ անշուշտ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպչական կառոյցին մաս կազմող շրջաններու աւելի քան 300 մարզիկ-մարզիկուհիներու:

Փակման խօսքէն ետք տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն: Յաղթական խումբին բաժակը նուիրեց մարզախաղերու նախագահ՝ եղբ. Ալպէր Շահինեան, Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն:

ՄԻՋ-ԳԻՒՆԵՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԳՎԾՈՂՈՎ

Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւաններու վեցերորդ խորհրդածողովը իր աշխատանքներուն սկսաւ Երկուշաբթի, 1 Օգոստոսին, Աթէնքի «Մեթրոփոլիթըն» պանդոկի ժողովարանին մէջ, ի ներկայութեան Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպչական կառոյցին մաս կազմող 8 Շրջանային եւ 8 Մեկուսի շրջաններու դիւանի անդամ քոյր-եղբայրներուն:

Ենօրեայ նիստերու ընթացքին, շրջաններու եւ Կեդրոնական Վարչութեան երկամեայ գործունէութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրներու ընթերցումէն ետք, խորհրդածողովը հանգամանօրէն անդրադարձաւ միութիւնը յուլոյ հարցերուն:

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԼԵԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԵՐ

Խաղերու առընթեր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը գումարեց ընթացիկ քառամեակի իր երրորդ յիսգումարը:

Չորս օրերու վրայ երկարող նիստերու ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը վերաքաղ մը կատարեց անցնող երկու տարիներու իր գործունէութեան եւ ծրագրեց յառաջիկայի իր ընելիքները:

Լիազումար նիստերու եւ միջ-դիւանական խորհրդածողովին ներկայացուած Վեկուցումներու եւ արտայայտուած մտքերու յոյսին տակ, որոշուեցաւ-

2 Հոկտեմբեր 2005ին կատարել որոշուած ուխտագնացութիւնը դէպի Տէր Զօր: Այդ առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անունով յուշաքար մը պիտի վետեղուի նահատակաց յուշահամալիրին մէջ եւ պիտի յայտարարուի Հ.Մ.Ը.Մ.ի Տէր Զօրի մասնաճիւղին ստեղծումը:

9-8-2005

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԹԻՒՆԻՆ ՆԻՆԹԵՐՆ


MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضية شهریه تصدیرها جمعیه المومتمن الریاضی



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԴԴԴ ՄԱՐԶԱՆԵԱԴԵՐ

- Բացումը 9
- Մրցումները 22
- Ճաշկերույթը 31
- Փակումը 32

Կարդալ նաեւ՝ Մամոյ Ասուլիս, Խաղերու Լուսանցքին, Քիչ Մը Պատմութիւն, Լաւագոյնները, Ընդհանուր Դասաւորումը



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Կազմակերպական 3
- Յարաբերական 6
- Ակնարկ 39
- Հաղորդագրութիւն Գ. կողք

Մարզական ամսաթերթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻԴ. ՏԱՐԻ, 2005, ԹԻՒ 6 (276)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲ
 Աբօ Մոսիկեան
 Իշխան Եղիայեան
 Գօգօ Մկրտիչեան

ԲԱՅԱՌԻԿ ԱՅՍ ԹԻՒԸ
 Բացառիկ այս թիւը նուիրուած է
 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 7րդ
 մարպիսաղերուն:
 Թիւին դուրս կը մնան թերթին
 մնայուն բաժինները:

Էջադրում - Չարեհ Չէօրէքճեան
 Գրաշարութիւն - Թամար Աբովեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՅԷ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 Թիւ 65 Շէք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmencentral.com
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատուվաճառի սակն է 3000 լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան
 սակ ճշդուած է 35000 լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Տեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՆԱԳՈՐԾՈՒՄԻ ՆԱԿԱՐԱԿՈՒՄ

ՅԱՂԹԵԼՈՒ ՎՃԻՌԸ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 7ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ)

Յաղթանակի իր տեսակաւոր դասիններուն վրայ, Հ.Մ.Ը.Մ. հատ մը եւս աւելցուց այս ամառ, երբ 24-31 Օգոստոս 2005ին, Աթէնքի մէջ իրականացուց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 7րդ մարզախաղերը:

Ութ օրեր Հ.Մ.Ը.Մ. լեցուց յունահայութեան կեանքը եւ բաց երկինքի տակ ազգային տօնախմբութեան մը բացառիկ վայելքը պարզեց:

Ութ օրեր միայն: Խաղերն ու անոնց ընկերակցող ձեռնարկները ամփոփուեցան այդքան ժամանակամիջոցի մէջ, եւ սակայն անոնց կազմակերպումը, անհաշուելի դժուարութիւններու յաղթահարումով, Հ.Մ.Ը.Մ.ի հաւատաւոր սերունդէն խլեց ամիսներու ճիգ ու աշխատանք:

Յունահայութեան հետ, աշխարհասփիւռ հայութիւնը, հոգիի աչքերով սպրեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս մեծ հարսանիքին ուրախութիւնը, որուն ներկայ եղան 12 երկիրներէ աւելի քան 200 մարզիկ-մարզիկուհիներ, բոլորը գաղափարի նոյն դրօշին սպասարկուողաք ու աղջիկներ, հայեցի նոյն արժէքներով մեծցած: Բոլորը միասին կազմած պատկառելի ամբողջութիւն մը, հսկայ բանակ մը, իբրեւ երիտասարդական ռզեւորութեան եւ ազգային հպարտութեան աղբիւր:

Հո՛ն, Ողիմպոսի երկրին մէջ, հայ ժողովուրդի աչքին ու սրտին դիմաց, ութ օրեր շարունակ մկաններու եւ ջիղերու հետ հոգիներ պրկուեցան, խանդավառութեան ալիքներ բարձրացան եւ հայ մարդոց փոխանցուեցաւ ներշնչումի եւ ինքնավստահութեան տաք շունչը:

Այսպէս, Նաւասարդեան տօնահանդէսներու փառքի օրերը յիշեցնող համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը, իբրեւ կազմակերպում, իբրեւ ռզիկ եւ արժէքի իրագործում, արտայայտեցին հայ ժողովուրդի յաղթելու վճիռը: Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու խոյանքէն տարւած, մեր ժողովուրդը իր ուժին, իր յոյսին պարծանքը տեսաւ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ եւ

քիչ մը աւելի գօտեպնդուեցաւ անոր շունչով եւ ռզիկով, կենսագործուած՝ իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով:

Հաւատարիմ այս նշանաբանին, արդարեւ, տասնամեակներէ ի վեր, հազարաւոր պատանիներ ու երիտասարդներ, միջ-մասնաձիւղային թէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու դրօշին տակ, պայքարներուն ամէնէն ազնիւր կը մղեն յանուն ուժին, վսեմին եւ գեղեցկութեան: Բարոյականը միացուցած ֆիզիքական կրթութեան, ազգայինը՝ համամարդկայինին:

Այս խոյանքը, այս շքեղ բարձրացումը անհատական տեսակէտէն խորապէս գնահատելի արժանիք մըն է: Բայց Հ.Մ.Ը.Մ.ը շատ աւելին ըրած է, քան անանձին անհատներու պատրաստութիւնը, իբրեւ փայլուն մարզիկ, իբրեւ մաքուր նկարագրի տէր անձ: «Բարձրացիր»ը նախապայմանն է ի հարկէ գեղեցիկ որեւէ գործի եւ սակայն անբաւարար՝ այդ գործը կատարեայ արդիւնքի հասցնելու համար: Մարդ կրնայ անձնապէս ինքզինք կատարելագործել եւ տիրանայ առողջ մտքի՝ առողջ մարմնի մը մէջ:

Դժուարագոյնը «բարձրացուր»ն է միշտ, կեանքի բոլոր մարզերուն մէջ: Թեւերուդ սյացքը ծանրաբեռնել վանգուածներու բեռով եւ քեզի հետ վեր քաշել նաեւ տկարները, կարիքաւորները-ահա՛ բուն սիրագործութիւնը:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը իրենց ձգած տպաւորութեամբ ա՛յս թելադրեցին հայ աշխարհին եւ եկան հաստատելու, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական իւրաքանչիւր ձեռնարկ համազգային սպրումի, կորովի, յաղթանակի ապահով երաշխիքներ կը բերէ մեզի, այնքան ատեն որ Հ.Մ.Ը.Մ.ականներու ծնունդ տուող մեր ժողովուրդը կը պահէ իր անխաթար դիմագիծը, ու այնքան ատեն որ մեր երապին, սրբութիւններուն եւ աւանդութիւններուն ռզեղէն ժառանգութեամբ կը մեծնան Հ.Մ.Ը.Մ.ական նոր սերունդները:



ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ Զ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ Կ'ԱՐԺԵՒՈՐԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ ԵՒ Կ'ԱՌԱՋԱԴՐԷ ԱՊԱԳԱՅԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

1-3 Օգոստոս 2005ին, Աթենքի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու միջ-դիւանական Զ. խորհրդաժողովը, որ եօթը նիստերով ընդհանուր արժեւորումը կատարեց միութեան վերջին Պատգամաւորական ժողովէն (2003) մինչեւ օրս կատարուած աշխատանքներուն եւ առաջարկներ ներկայացուց մինչեւ յառաջիկայ Պատգամաւորական ժողով (2007) իրականանալիք ծրագիրներու: Ժողովը անդրադարձաւ նաեւ միութիւնը յուզող հրատապ հարցերու եւ ըստ այնմ՝ համապատասխան որոշումներով նոր մղում տուաւ շրջաններու գործունէութեան:

Խորհրդաժողովը կատարուեցաւ «Մեթրոփոլիթըն» պանդոկի «Հելիոս» սրահին մէջ, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ինը եղբայրներու, Կեդրոնական Վարչութեան գործավարին եւ միութեան 16 շրջաններէ 35 ներկայացուցիչներու՝ Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներէն, Հարաւային Ամերիկայէն, Գանատայէն, Աւստրալիայէն, Յունաստանէն, Լի-

բանանէն, Քուէյթէն, Գահիրէէն, Ադրբայձեյն, Երուսաղէմէն, Լոնտոնէն, Փարիզէն, Կիպրոսէն, Վիեննայէն եւ Պուլկարիայէն: Խորհրդաժողովին հիւրաբար մասնակցեցաւ նաեւ Թեհրանի «Արարատ» կազմակերպութեան ներկայացուցիչը:

Աշխատանքները սկսան Երկուշաբթի, 1 Օգոստոսի առաւօտեան ժամը 10ին, «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգումով: Բացման նիստին ներկայ էին նաեւ Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը, «Ազատ Օր»

օրաթերթի խմբագիրը եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու նախագահը, որոնք հանդէս եկան ողջոյնի խօսքերով:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անունով խորհրդաժողովին բացումը կատարեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ անդրադարձաւ Կեդրոնական Վարչութեան նորագոյն նախաձեռնութիւններուն («Հ.



Մ.Ը.Մ. եւ Ապրիլ 24», «Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական ուղեցոյց» գրքով կենտրոն հրատարակութիւն, Հայկական Յեղասպանութեան 90ամեակի նուիրուած սկստական պէներու պատրաստութիւն...), ապա՝ խորհրդաժողովին օրակարգը ներկայացնելով, մասնակիցներուն թելադրեց հարցերը քննել լաւապէս՝ կարենալ ուղղութիւն տալու համար միութեան յառաջիկայ Պատգամաւարական ժողովին: Եղբ. Մկրտիչեան յայտնեց նաեւ, որ շրջաններու ներկայացուցիչները անպայման իրենց ըսելիքը պէտք է ունենան միութիւնը յուզող հարցերու նկատմամբ եւ, հետեւաբար, խորհրդաժողովը լաւագոյն առիթն է ներկայացնելու ընդհանուր դժուարութիւններ եւ հաւաքաբար լուծումներ որոնելու անոնց:

Կեդրոնական Վարչութեան խօսքէն ետք, տեղի ունեցաւ խորհրդաժողովի մասնակիցներու ծանօթացում, որմէ ետք՝ շրջաններու ներկայացուցիչները ներկայացուցին իրենց գործունէութեան համառօտ տեղեկագիրները: Խորհրդաժողովէն բանաւոր կերպով բացակայող շրջաններու (Հայաստան, Սուրիա, Պաղտատ, Ալժիր) գործունէութեան մասին բացատրութիւններ տուաւ Կեդրոնական Վարչութեան ատենապետը: Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչը՝ եղբ. Լեւոն Պաղտասարեան, իր կարգին, տեղեկութիւններ տուաւ Վալանսի շրջանին մասին:

Յաջորդեց Կեդրոնական Վարչութեան երկամեայ գործու-

նէութեան նիւթաբարոյական տեղեկագիրին ներկայացումը եւ անոր շուրջ լուսաբանական հարցում-պատասխաններու բաժինը:

Յաջորդ օր, 2 Օգոստոսին, խորհրդաժողովը առաւելաբար զբաղեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի համացանցի պատրաստութեան ընթացքի մէջ եղող կայք էջով (www.central.homenetmen.net) եւ միութեան «Մարզիկ» ամսաթերթով: Խորհրդաժողովը երկարօրէն կանգ առաւ «Մարզիկ»ի հրատարակութեան եւ ցրուումին կապուած հարցերուն, ինչպէս նաեւ՝ թերթին 25ամեակի ձեռնարկներուն վրայ:

Խորհրդաժողովին վերջին օրը յատկացուեցաւ ընդհանուր հարցերու քննարկման եւ Կեդրոնական Վարչութեան փոխանցումներու: Օրակարգի վրայ եղան հետեւեալ կէտերը.-

- Յառաջիկայ երկամեակի համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներու մասնակցութիւն եւ յանձնառութիւններ.
- Վարչական նկատողութիւններ.
- Դիւանական յիշեցում-թելադրանքներ.
- Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ վիճակի անդրադարձ.
- Կանոնադրային հարցեր.
- Այլ հարցեր

Խորհրդաժողովին աշխատանքները աւարտեցան կէսօրուան ժամը 2ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Գ. ԼԻԱԳՈՒՄԱՐԸ ԱԹԷՆՔԻ ՄԷՉ

Գ ա ն ի Ր Ե Ի (2003) եւ Ե Ր Ե Ա Ն Ի (2004) լիագումար երկու ժողովներէն ետք, 2003-2007 քառամեակի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երրորդ լիագումարը տեղի ունեցաւ 29-31 Յուլիս եւ 4-5 Օգոստոս 2005ին, Աթէնքի մէջ:

Յաջորդական նիստերու ընթացքին, լիագումարը ընդհանուր քննարկումը կատարեց միութեան անցնող մէկ տարուան գործունէութեան եւ նոր քայլեր ճշդեց յառաջիկայի աւելի բեղուն աշխատանքներու:

Այսպէս, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց հա-



Ձախէն աջ՝ Կեդրոնական Վարչութեան անդամներ Հրաչ Տէր Սարգիսեան, Մանուէլ Մարսէլեան, Վահրամ Դանիէլեան, Կարօ Թիրօիւնճեան, Գառնիկ Մկրտիչեան, Պատրիկ Կիլիպէնկեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Աբրահամ Ահարոնեան, Լեւոն Պաղտասարեան, Մհեր Դաւիթեան եւ Կեդրոնական Վարչութեան գործավար Թամար Աբովեան:

Նկարէն կը բացակային Կեդրոնական Վարչութեան անդամներ Ստեփան Տէր Պետրոսեան, Յարութ Յարութիւնեան եւ Գէորգ Կարապետեան:

մա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ ընդհանուր քննարկումը կատարել 2006ի Յուլիսի վերջը-Օգոստոսի սկիզբը՝ Հայաստանի մէջ, առանց մասնակիցներու թիւի սահմանափակում կատարելու: Իբրեւ պատուոյ խմբապետ, քննարկումին պիտի հրաւիրուի վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Յակոբ Կարապետեանը (Աքելլա): Պիտի հրաւիրուին նաեւ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ եւ նախկին խմբապետներ:

Սկստական Արարատեան կարգի գծով, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց ի պաշտօնէ Արարատեան կարգ տալ յիշեալ կարգի եռանդամ յանձնա-

խումբի անդամ եղբայրներ՝ Ժիրայր Սարգիսեանին, Վարուժան Սերոբեանին եւ Միհրան Շիմշիրեանին: Միաժամանակ, ան յարմար նկատեց առանց քննութեան կամ թեզի ներկայացման՝ Արարատեան կարգ տալ անոնց, որոնք սկաւտական աշխատանքներու մեծ վաստակ ունին միութեան մէջ:

Իբրեւ Պատգամաւորական Ժողովի տրամադրութիւններու գործնականացում, Կեդրոնական Վարչութիւնը խստիւ արգիլեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի եւ Սուրիոյ շրջաններուն մէջ կիրակուող արհեստավարժ դրութեան շարունակումը:

Կազմակերպական գլխուն տակ, ի շարս այլ նիւթերու, Կեդրոնական Վարչութիւնը լայնօրէն կանգ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հունգարիոյ նորաստեղծ մասնաճիւղին աշխատանքներուն վրայ: Ան որոշեց թափ տալ միութեան եւրոպայի մասնաճիւղերու գործունէութեան եւ թելադրեց, որ անոնք, ըստ յարմարութեան, իրենց բանակումները կատարեն Հունգարիոյ մէջ:

Կեդրոնական Վարչութիւնը մօտէն քննեց միութեան աւելի քան 95 մասնաճիւղերուն վիճակը եւ նպատակադրեց յառաջիկայ օրերուն կազմակերպել Գարեայի շրջանը (Յունաստան), սկաւտական շարժում յառաջացնել Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ մէջ եւ վերաշխուժացնել Պուլկարիոյ եւ Վալանսի շրջանները:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գործունէութեան անդրադառնալով, լիազումարը որոշեց անյապաղ ձեռնարկել քոյր մասնաճիւ-

ղերու ծրագրին իրականացման: Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն կարգ մը մասնաճիւղեր արդէն այս գծով նախապատրաստական աշխատանքներ կատարած են: Կը մնայ աշխատանքները իրենց լրումին հասցնել:

Հայկական Ցեղասպանութեան 90ամեակի նախաձեռնութիւններու շարքին, որոշուեցաւ 2 Հոկտեմբերին ուխտագնացութիւն մը կատարել Տէր Զօր եւ միութեան մասնաճիւղերուն անունով խաչքար մը գետեղել հոն:

Միութեան «Մարգիկ» ամսաթերթը եւս դարձաւ լիազումարի քննարկման նիւթ: 2005ը «Մարգիկ»ի հրատարակութեան 25ամեակը ըլլալով, որոշուեցաւ շուտով աւարտել թերթին 25ամեայ երթը ներկայացնող *Մի-Տի*-ին պատրաստութիւնը եւ զայն շրջանները յղել՝ յատուկ ձեռնարկներու ընթացքին ցուցադրուելու եւ «Մարգիկ»ի ի նպաստ նուիրահաւաք կատարելու համար:

Լիազումարը քննեց նաեւ միջ-դիւնական Զ. խորհրդաժողովին եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Է. մարգախաղերուն արդիւնքները եւ անոնց լոյսին տակ կատարեց ընդհանուր արժեւորումներ:

Վերջապէս, լիազումարը գոհունակութեամբ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կեդրոնի բարեգարդման աշխատանքներուն եւ ծանօթացաւ Հ.Մ.Ը.Մ.ի համացանցի կայք էջի բաժիններուն, որոնք պատրաստութեան մէջ են եւ շուտով հանրութեան կը ներկայացուին:


ARMENIA

for private and group trips


www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select
your Journey
- Guided Tours
for 8 Days
or 12 Days

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY



Armavia
Արմավիա

Photos: © Yarm Armuté-Berthiaud, Ferre via du Ciel. Licence 075 960031. Saberatours 2005-2006

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐՈԼՈՍ ՓԱՓՈՒԼԻԱՄԻՆ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Նրդ մարզախաղերուն առիթով Աթէնք գըտնըւող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մէկ պատուիրակուիւնը, բաղկացած՝ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեանէ, Ստեփան Տէր Պետրոսեանէ եւ Վահրամ Դանիէլեանէ, 29 Յունիսին, պաշտօնական այցելութիւն մը տուաւ Յունաստանի նախագահ Գարոլոս Փափուլիասին: Պատուիրակութեան մաս կազմեց Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Նրդ մարզախաղերու կեդրոնական յանձնախումբի ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան:

Այցելութեան ներկայ գտնուեցաւ նաեւ Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Գրիգոր Էրջէնեան:

Նախագահ Փափուլիասի կողքին, Հ.Մ.Ը.Մ.ական հիւրերը ընդունեցին նախագահի դիւանագիտական հարցերու խորհրդատու Թէոտորոս Փասսար եւ մամլոյ ներկայացուցիչ՝ Տիմիթրիս Փափափանայթուն:

Շուրջ ժամ մը տեւած սիրալիր այցելութեան ընթացքին, պատուիրակուիւնը համառօտ կերպով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը, վարչական աշխարհատարած կա-



ռոյցը եւ հետապնդած ազգային նպատակները: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերուն անդրադառնալով, պատուիրակուիւնը կարեւորութեամբ շեշտեց Յունաստանի մէջ անոնց գումարումը, ինչ որ կ'ամրապնդէ հայ եւ յոյն ժողովուրդներու դարաւոր բարեկամութիւնը: Այս առիթով եղբայրները շնորհակալութիւն յայտնեցին նախագահին՝ յունական պետութեան ցուցաբերած եղբայրական վերաբերումին եւ քաջալերանքին համար:



Պատուիրակուիւնը նաեւ յիշեցուց, որ այս մարզախաղերը կը զուգահրիպին Հայկական Յեղասպանութեան 90ամեակին եւ այդ պատճառով յատուկ իմաստ եւ թելադրականութիւն կը ստանան, քանի Հայկական Հարցը տակաւին լուծուած չէ, Թուրքիոյ կողմէ հայկական հողեր կը շարունակեն բռնագրաւումի տակ ըլլալ եւ հայ ժողովուրդի ազգային պահանջատիրութեան, իրաւունքներու եւ հա-

Ձախէն աջ՝ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան, Գրիգոր Էրջէնեան, Յունաստանի նախագահ Գարոլոս Փափուլիաս, եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Վահրամ Դանիէլեան եւ Պօղոս Չոլաքեան:

տուեցման թղթածրարը հետապնդում մէջ է:

Նախագահ Գարրոս Փափուլիաս, իր կարգին, անդրադարձաւ թուրքիոյ եւրոպական Միութեան անդամակցութեան հարցին, շեշտելով որ անոր անդամակցութիւնը պէտք է պայմանաւորուի մարդկային արժէքներու նկատմամբ թուրքիոյ որդեգրած քաղաքականութեամբ եւ հասնի եւրոպական արժեքափերու: Ապա, ան աւելցուց ըսելով, որ ինչպէս Գերմանիոյ վարչապետ Ուլիխ Պրանտներողութիւն խնդրեց հրեայ ժողովուրդէն, այդպէս ալ թուրքիա պէտք է, իբրեւ նուազագոյն բարոյական պարտականութիւն, նե-



րողութիւն խնդրէ հայ ժողովուրդէն եւ ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը:

Այցելութեան աւարտին, Հ.Մ.-Ը.Մ.-ի պատուիրակութեան կողմէ նախագահ Փափուլիասին յանձնուեցաւ յուշանուէր մը, պատրաստուած՝ համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական Դրդմարդախաղերուն առիթով:

Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Յունաստանի նախագահին կը փոխանցէ համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական 7րդ մարզախաղերուն յուշանուէրը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԹԷՆՔԻ ՄԷՉ

Համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական Դրդմարդախաղերը, միջ-դիւանական խորհրդաժողովը եւ տարեկան լիագումար նիստերը պատեհ առիթը եղան, որպէսզի Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը մօտէն ծանօթանայ յունահայ գաղութին եւ անոր ազգային-հասարակական կեանքին:

Ծանօթացումը կատարուեցաւ տեսակցութիւններու շարքով մը, որ ընդգրկեց Յունահայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տղրամաճեանը, Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեանը եւ Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէն:



ՅՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԳԻՆ ՄՕՏ

Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան բազմանդամ մէկ պատուիրակութիւնը յունահայոց Ազգային Առաջնորդարան այցելեց 27 Յուլիս 2005ի առաւօտեան ժամը 11ին: Պատուիրակութեան մաս կազմեցին Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Վահրամ Դանիէլեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Մանուէլ Մարսէլ-

Կեդրոնական Վարչութեան եղբայրներ Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի անդամներուն հետ:

Ձախէն աջ՝ եղբայրներ Սարգիս Տէր Պետրոսեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Վահրամ Դանիէլեան, Արթուր Ահարոնեան, Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Կոմիտէի անդամներ Գրիգոր Էրջէնեան, Պօղոս Չոլաքեան, եղբ. Կարո Թիրփինճեան, Սերգօ Գուլումճեան, եղբ. Պատրիկ Կիլիպէնկեան, Գասպար Կարապետեան, եղբ. Մանուէլ Մարսէլեան եւ Միհրան Քիրտօղլեան:

եան եւ Սարգիս Տէր Պետրոսեան: Տեսակցութեան ներկայ գտնուեցան նաեւ Հ.Մ.-Ը.Մ.-ի Յունաստանի Շրջանային Վար-

չուժեան ատենապետ եղբ. Յակոբ Եթիմեան եւ համա-Հ.Մ.Ը.-Մ.ական Դրդ մարզախաղերու կեդրոնական յանձնախումբի ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան:

Տեսակցութեան ընթացքին, եղբայրները Առաջնորդ Հօր գեկուցեցին Հ.Մ.Ը.-Մ.ի գլխաւոր աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին: Անոնք անդրադարձան համա-Հ.Մ.Ը.-Մ.ական մարզախաղերուն, իբրեւ Հ.Մ.Ը.-Մ.ի շրջանները քով-քովի բերող նախաձեռնութիւն: Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամանեան իր մեծ հետաքրքրութիւնն ու զօրակցութիւնը ցոյց տուաւ Հ.Մ.Ը.-Մ.ին եւ անոր առաքելութեան նկատմամբ: Այնուհետեւ քննուեցան երիտասարդութեան ներգրաւման միջոցները եւ Հ.Մ.Ը.-Մ.ի դիմագրաւած մարտահրաւէրները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ՎԱՀՐԱՄ ԿԱԺՈՅԵԱՆԻ ՄՕՏ

Նոյն օրը, երեկոյեան, ժամը 5ին, Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը տեսակցութիւն մը ունեցաւ Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեանի հետ:

Տեսակցութեան ընթացքին արծարծուեցան Հայաստան-Սփիւռք գործակցութեան հեռանկարները եւ հայ մարմնակրթութեան դիմագրաւած դժուարութիւնները:

Կեդրոնական Վարչութեան եղբայրները դեսպանին ծանօթացուցին Հ.Մ.Ը.-Մ.ի կառույցը եւ աշխատանքները՝ յատկապէս Հայաստանի մէջ:

Հ.Յ.Գ. ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ ՄՕՏ

Տեսակցութիւններու շարքը աւարտեցաւ երեկոյեան ժամը 6.30ին, Հ.Յ.Գ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէին հետ հանդիպումով մը:

Աւելի քան երկու ժամ տեւած տեսակցութեան ընթացքին, դրական անկեղծ մթնոլորտի մէջ, նիւթ դարձաւ համա-Հ.Մ.Ը.-Մ.ական Դրդ մարզախաղերուն ընթացքը: Քննուեցան նաեւ Հ.Մ.Ը.-Մ.ի Յունաստանի շրջանին առնչուած հարցեր: Տեղեկութիւններ փոխանցուեցան յունահայ գաղութին, ազգային կեանքին, Հ.Մ.Ը.-Մ.ական կառույցներուն, մասնաճիւղերուն եւ սկստական շարժումին մասին:

Հ.Մ.Ը.-Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուց համա-Հ.Մ.Ը.-Մ.ական իր ձեռնարկներուն (մարզախաղեր, դիւաններու խորհրդաժողով, բանակում...) եւ Հ.Մ.Ը.-Մ.ի վերաբերող ապագայի ծրագիրները: Ապա, ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Յ.Գ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէին՝ համա-Հ.Մ.Ը.-Մ.ական մարզախաղերուն իր ընձեռած օժանդակութեան համար:

Վերոյիշեալ տեսակցութիւններուն ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը հիւրընկալներուն փոխանցեց համա-Հ.Մ.Ը.-Մ.ական Դրդ մարզախաղերը յաւերժացնող յուշանուէրներ:

Made from one single slice of natural Australian opal!



Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

*Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com*



ՈՂԻՄՊՈՍԻ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ՝

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 7ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԲԱՑՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՇՈՒՔՈՎ, ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՈԳԵՒՈՐԻՉ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ

Նախագահութեամբ Յունահայ Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեանի, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ մարզախաղերու կեդրոնական յանձնախումբին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 7րդ մարզախաղերուն պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Կիրակի, 24 Յուլիսի երեկոյեան ժամը 9.30ին, Աթէնքի սոփօպոլի ողիմպիական մարզադաշտին մէջ:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Յունաստանի փոխադրական հարցերու փոխ նախարար Անասթասիոս Ներանձիս, պետական ու քաղաքական երեւելի դէմքեր (տեսնել ցանկը), Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաժոյեան, Յունահայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Մանուէլ Մարսէլեան, Սարգիս Տէր Պետրոսեան եւ Վահրամ Դանիէլեան, մարզախաղերու նախագահ եղբ. Արպէր Շաչինեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան, Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէն, յու-





Պատուիրակութիւններու մարզիկները համախմբուած էին մարգարաշտին աջ կողմը եւ յաճախակիօրէն իրենց ներկայութիւնը զգալի կը դարձնէին Հ.Մ.Ը.-Մ.ական, սկառուտական եւ իրենց երկիրներու յատուկ կանչերով:

**ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ՅԱՅՏԱԳԻՐԸ**

Բացման հանդիսութեան գեղարուեստական յայտագիրը ունեցաւ 20 վայրկեանի տեւողութիւն եւ խանդավառութեան մեծ այլք ստեղծեց հանդիսականներուն մօտ: Յայտագիրը ունեցաւ երկու բաժին: Առաջին բաժինով, վիտեռոյի ընկերակցութեամբ եւ կենդանի պատկերներով ներկայացուեցաւ հայոց պատմութիւնը՝ անցեալէն մինչեւ մեր օրերը, Սփիւռքի յառաջացումը եւ յունահայ գաղութին կազմութիւնը: Երկրորդ բաժինը ընդգրկեց հայկական եւ յունական պարեր, կատարողութեամբ՝ Համազգայինի պարախումբին:

Յայտագրին ընդհանուր բեմադրութիւնը վստահուած էր Տիգրան Յովակիմեանի, իսկ պարերու ուսուցումը, երաժշտաւորումը եւ վիտեռոյի պատրաստութիւնը կատարած էր Ալիս Ֆունունճեան:

ԲԱՅԱՆ ԽՕՍԵՐԸ

Մարգարաղերուն պաշտօնական բացումը հայերէն եւ յունարէն լեզուներով կատարեց քոյր Մարի Եղիշեան,

նահայոց Ազգային Վարչութիւնը, յարանուանութիւններու եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, Հ.Բ.Ը.-Մ.ի եւ «Արարատ» մարզական մշակութային միութեան պատասխանատուներ եւ 2500 հանդիսականներ:

Բացման ազդանշանէն ժամեր առաջ արդէն ընդհանուր խանդավառութիւն մը կը տիրէր մարգարաշտին մէջ: Ամէնուրեք զարդարուած էր Եռագոյն, յունական եւ մասնակցող պատուիրակութիւններու երկիրներուն դրօշներով, պաստառներով ու որմագրներով:



ՅՈՅՆ ՀԻՒՐԵՐԸ

Մարպախաղերու բացման մեծաշուք հանդիսութեան ներկայ գտնուեցան Յունաստանի փոխադրական հարցերու փոխ նախարար Անասթասիոս Ներանժիս, Յունաստանի մարմնամարզի նախարարութեան ընդհանուր քարտուղար Գոսթաս Բուքրտիմոսի ներկայացուցիչ՝ Թանասիս Ծիէրօղլու, ՓԱՍՕՔ կուսակցութեան ներկայացուցիչ Սոֆիա Սաքորաֆա, Նիքէայի քաղաքապետ Սթէրիոս Պենթաթոս եւ փոխ քաղաքապետներ, Նէա Չմիոնիի փոխ քաղաքապետներ Վանկէլիս Խաչատուրեան եւ Փոլիտորաս Սիրիղոս, Իլիուփոլիի փոխ քաղաքապետ Եորղոս Անասթասփուլոս, Վիրոնայի փոխ քաղաքապետ Մարօ Ատամփուլոս, Քալիթէայի քաղաքապետութեան ներկայացուցիչ Յոթիս Տիլէս, Հին Ճալիրոյի քաղաքապետական խորհուրդի անդամ Սթէլլա Նաքու, Քալիթէայի մարպական միութիւններու փոխ նախագահ Եորղոս Վուլքոփուլոս, Յունաստանի սկաուտական մարմնէն Նիքոլասու Պայիս եւ Յունաստանի փինկ-փոնկի ֆետերասիոնի քարտուղար Եորղոս Լողոթէթիս:



Համագրգայինի պարախուսրին մասնակցութիւնը գեղարունեստական յայտագրին:

նշելով թէ տարի մը առաջ Աթէնքը հիւրընկալեց ողիմպիական խաղերը, որոնք ընթացան փայլուն յաջողութեամբ եւ աշխարհին փոխանցեցին կազմակերպական սքանչելի փորձառութիւն մը:

Այս մարզախաղերուն արդիւնքները այնքան կարեւոր չեն, որքան մեր հաւաքական մասնակցութիւնը, յայտնեց քոյրը եւ շեշտեց, որ մրցումները քաջութիւն կը ներշնչեն մեզի, որպէսզի մեծ ճիգ ի գործ դնենք՝ հասնելու համար մեր նպատակին:

Քոյրը մրցումներու յաջողութեան երաշխիքը հանդիսացող «անձանօթ հերոսներ»ուն գնահատանքի խօսք ուղղեց եւ իր խօսքը եզրափակեց ըսելով, թէ այս խաղերը անպայման իրենց հետքը պիտի ձգեն հայկական Սփիւռքի պատմութեան մէջ:

ՀԱՆԳԻՍԱՌՈՐ ՏՈՂԱՆՅՔԸ

Բացման խօսքին յաջորդեց մարզախաղերու մասնակից մարզիկներու, վարչական պատասխանատուներու եւ Յունաստանի սկաուտական շարքերուն հանդիսաւոր տողանցքը՝ Աթէնքի քաղաքապետութեան քառասուն հոգինոց շեփորախումբին առաջնորդութեամբ:

Այսպէս, բարձրաճակատ ու խրոխտ քայլերով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Գահիրէի, Աղեքսանդրիոյ, Հարաւային Ամերիկայի, Աւստրալիոյ, Պուրկարիոյ, Ֆրանսայի, Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Գանատայի, Կիպրոսի, Լիբանանի եւ Յունաստանի մարզիկ-մարզիկուհիները, որոնց հետեւեցան հիւրընկալ շրջանի արիւարենոյշները, գայլիկ-արծուիկներն ու վառվռուն մոկլիները:

Ապա, տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Հնչեցին քայլերգները եւ բարձրացան համա-Հ.Մ.Ը.Մ.ական Պրդ մարզա-




խաղերու, Հ.Մ.Ը.Մ.ի, Հայաստանի եւ Յունաստանի դրօշները:

ՓՈՒՆ ՆԱԽԱՐԱՐ ՆԵՐԱՆԾԻՄԻ ՈՂՁՈՅՆԸ

Յունաստանի կառավարութեան անունով մարզախաղերուն բացումը ողջունեց փոխադրական հարցերու փոխ նախարար Անասիսափոս Ներանձիս:

Իր խօսքին մէջ, փոխ նախարար Ներանձիս անդրադարձաւ հայ եւ յոյն ժողովուրդներու պատմական հասարակաց ճակատագրին: Ան նշեց, որ երկու ժողովուրդները խիզախութեամբ ընթացան պատմութեան բովէն, ճաշակելով ցեղասպանութիւններ, տարագրութիւններ եւ բանտարկութիւններ: Հակառակ իրենց հայրենակորուստ վիճակին, անոնք երբեք չընկրկեցան, այլ՝ շարունակեցին իրենց պատմական երթը: Անոնք որոնք վերապրեցան թրջական եաթաղանէն, ողբերգական պայմաններու մէջ հասան Յունաստան եւ հիւրընկալուեցան յոյն կառավարութեան եւ ժողովուրդին կողմէ:

Շարունակելով, փոխ նախարարը



Աթէնքի քաղաքապետութեան շեփորախումբը կ'առաջնորդէ մարզիկներու տողանցքը:

նկատել տուաւ, որ 2004ի ողիմպիականին փորձառութիւնը այսօր կը փոխանցուի համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրդ մարզախաղերուն: Այս առիթով, ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.-ին, որ նախընտրեց իր մարզախաղերը Յունաստան կատարելու: Այդ ուրա-

խութեամբ կ'ողջունեմ մրցումները եւ վստահ եմ, որ անոնք բոլորն ալ յաջողութեամբ պիտի պսակուին: Մրցումներուն առաջնութիւն շահիլը կարեւոր ըլլալով հանդերձ՝ կենսական չէ, կարեւորը մասնակցութիւնն է, կարեւորը մարզախաղերու յաջողութեան բուրգին օգ-

ԽԱՂԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ՝

ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ

Յունաստանի մարմնամարզի նախարարութեան ընդհանուր քարտուղարութեան հովանաւորութիւնը վայելող համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը, բացումէն երկու օր առաջ, յոյն հասարակութեան ներկայացուցեցան մամլոյ ասուլիսով մը:



Ասուլիսը տեղի ունեցաւ նախարարութեան ընդհանուր քարտուղարութեան գրասենեակին մէջ, մասնակցութեամբ՝ մարզախաղերու կեդրոնական յանձնախումբի ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեանի եւ նախարարութեան ընդհանուր քարտուղար Գոսթաս Քուրտիմոսի:


Իր խօսքին մէջ, Քուրտիմոս դիտել տուաւ, որ Յունաստան կը հիւրընկալէ ողիմպիական գաղափարախօսութեան եւ արժէքներէն առաջնորդող մարմնամարզական մեծ իրադարձութիւն մը: Պատիւ է Յունաստանի համար այս մարզախաղերուն իրագործումը Աթէնքի մէջ:

Շարունակելով, յոյն պաշտօնատարը յայտնեց, որ այս մարզախաղերուն իրենց ներկայութեամբ պիտի սատարեն աւելի քան 200 կամաւորներ, որոնք մարմնակրթական այս ծաւալուն կայմակերպութեան յաջողութեան բանալին եւ գրաւականը կը հանդիսանան:

Այս առիթով, Քուրտիմոս դրուատիքով արտայայտուեցաւ յունահայ գաղութին մասին, իբրեւ կայմակերպուած համայնք եւ կառոյցներու ամբողջութիւն: Ասոր կենդանի փաստը կը կայմէ այն երեւոյթը, որ մարզախաղերուն Յունաստանէն կը մասնակցին յունահայ 70 մարզիկներ՝ պասքեթպոլի տղոց ու աղջկանց, վոլիպոլի տղոց եւ լողի տղոց ու աղջկանց մարզիկներով, յայտնեց ան:

Քուրտիմոս Յունաստանի մարմնամարզի նախարարին անունով յաջողութիւն մաղթեց մարզախաղերուն եւ բարի կեցութիւն՝ հիւր մարզիկներուն:

Իր կարգին, եղբ. Պօղոս Չոլաքեան շնորհակալութիւն յայտնեց Գոսթաս Քուրտիմոսին՝ մարզախաղերուն նկատմամբ իր ցուցաբերած հետաքրքրութեան համար: Ան ընդգծեց նաեւ հայ եւ յոյն ժողովուրդներու դարաւոր բարեկամութեան շարունակման եւ ամրապնդման անհրաժեշտութիւնը:



Մարզախաղերուն բացումը կ'ողջունէ Յունաստանի փոխադրական հարցերու փոխ նախարար Անասթասիոս Ներանձիս:

տակար քար մը զետեղելն է», ըսաւ Ներանձիս:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԲՈՅՐ ԵՒ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ ԵՐԳՈՒՄԸ

Փոխ նախարարին խօսքէն ետք, մարզադաշտին լոյսերը շիջեցան եւ խորհրդաւոր մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ մարզախաղերու բոցին առկայծումը:

Յաջորդեց մարզիկներու երգման արարողութիւնը: Մարզախաղերուն մասնակցող մարզիկներուն անունով, Յունաստանի պասքեթպոլի աղջկանց խումբէն քոյր Թայլին Ղեւոնդեան կատարեց երգումը:





Չախիմ՝ մարզախաղերու կեդրոնական յանձնախումբի ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան կ'արտասանէ բարի գալուստի խօսք: Աջիմ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Եթիմեան:

ԵՂԲԱՅՐՆԵՐ ՉՈՒՆՔԵԱՆԻ ԵՒ ԵԹԻՄԵԱՆԻ ԽՕՍՔԵՐԸ

Մարզախաղերու կեդրոնական յանձնախումբին անունով, ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան բարի գալուստ մաղթեց հինգ ցամաքամասերէ ժամանած Հ.Մ.Ը.Մ.ական պատուիրակութիւններուն, յոյս յայտնելով որ ողիմ-

պիական ոգին բարձր կը պահուի մրցումներուն ընթացքին: Եղբ. Չոլաքեան խօսեցաւ նաեւ հայ եւ յոյն ժողովուրդներու աւանդական բարեկամութեան եւ զիրենք իրարու կապող մշակութային կապերուն մասին:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենա-

պետ եղբ. Յակոբ Եթիմեան կարճ խօսքով մը գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի ուժը ընդհանրապէս եւ յունահայ գաղութին մէջ մասնաւորապէս: Ան ներկայացուց մարզական եւ սկստական կառույցներու ներկայութիւնը Յունաստանի մէջ եւ գոհունակութիւն յայտնեց, որ մարզիկներ, սկստներ եւ մեծ թիւով կա-



Travel Ways - Egypt

NILE CROCODILE CRUISES

*Incoming Tour Operator
Hotel & Cruise Reservation
Transportation
Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt
Tel: 02 2739400/500/600
www.travelways-egypt.com
marketing@twaysegy.com



մաւորներ իրենց անսակարկ մասնակցութեամբ գրաւականը հանդիսացան մարզախաղերուն մեծ յաջողութեամբ իրականացման:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂՔ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գաւրնիկ Մկրտիչեան, որ ողջունեց համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերուն ողիմպիական խաղերու օրրան՝ Յունաստանի մէջ կազմակերպումը եւ

յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. գոյապայքարի ամէնէն հզօր զէնքերը ունի՝ առողջ երիտասարդութիւն եւ կայտառ սկսողները: «Այս իմաստով ո՛չ մէկ օտար ուժ կրնայ յաղթել մեզի: Ո՛չ մէկ ուժ կրնայ խախտել մեր միասնականութիւնը: Ո՛չ մէկ ուժ կրնայ աղաւաղել մեր հայադրոջմ դիմագիծը: Այսօր, վերակենդանացնելով պատմական Նաւասարդեան տօնախմբութիւնները, լուսաշող հեռանկարով նոր էջ մը կը բանանք հայոց պատմութեան անդաստանին մէջ: Յաղթահասակ սերմնացանին նման կանգնած՝ մանկալի

փոխարէն Եռագոյնը բարձր բռնած կ'ըսենք. կանգ ու պիտի մնանք միշտ հայ ժողովուրդի ծառայութեան յառաջատար դիրքերուն վրայ, վասն հայպահպանման, վասն հայակերտումի, վասն աւելի պայծառ ապագայի իրականացումին», *ըսաւ եղբ. Մկրտիչեան:*

Շարունակելով, Կեդրոնական Վարչութեան ատենապետը իր ողջունները փոխանցեց «համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրդ մարզախաղերու մասնակից մարզիկ-մարզիկուհիներուն, որոնք,- յայտնեց ան,- եկած են աշխարհի հինգ ցամաքամասերէն, անգամ մը եւս վկայելու արար աշխարհին, որ իրենք իբրեւ Մեծ Եղեռնի ծնունդ կազմակերպութեան անդամներ, հաւատարիմ պիտի մնան իրենց արեան կանչին եւ երբեք պիտի չհեռանան հայութենէն: Իրենց բոլոր ուժերով պիտի պայքարին այլասերումի վտանգին դէմ եւ պիտի պանծացնեն Հայաստանի անունը աշխարհի չորս ծագերուն»:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունն ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

«Եղբայրական մեր ջերմ համբույրները Արարատի տեսիլքով ապրող մեր աւելի քան 25 հազար անդամներուն, որոնք այս պահուն, իրենց բնակած երկիրներէն հոգեկան աչքերով կը հետեւին մեր խաղերուն», *ըսաւ եղբ. Մկրտիչեան:*

Հ.Յ.Գ. ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ ԽՕՍՔԸ


Հ.Յ.Գ. Յոնաստանի Կեդրոնական Կոմիտէին ողջոյնի խօսքը փոխանցեց Միհրան Քիւրտոյեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը անգամ մը եւս կը շեշտէ իր ներկայութիւնը հայ իրականութեան մէջ, կը վերահաստատէ մշտանորոգ իր թարմութիւնը, իր կենսունակութիւնն ու ուժականութիւնը, իրերայաջորդ սերունդներու ժամադրավայրը ըլլալու իր հանգամանքը՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու կազմակերպման ընդմէջէն:

Քիւրտոյեան անդրադարձաւ մարզական ոգիի կարեւորութեան եւ դիտել տուաւ, որ մարզական ոգին կը խտացնէ «խաղադուրբեան, հաւասարութեան, համերաշխ գործակցութեան, փոխադարձ յարգանքի, արդարութեան եւ



իրաւունքի եպպես մարդկային ձրգտումները»:

«Հին դարերէն մինչեւ մեր օրերը ինչ-ինչ գաղափարաբանութիւններ ծնան ու մեռան,- շարունակեց Քիւրտոյեան,- կրօններ չդիմացան ժամանակի մաշումին, նոյնիսկ Ողիմպոսի եւ Նաւասարդեան մեր աստուածները մոռացութեան տրուեցան, բայց եւ



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations
Yerevan
 32-38, Hanrabadoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europehotel.am

Studio/WEB 2005 F&DS

այնպես մարզական ոգին ու գաղափարը տոկացին եւ կը շարունակեն հմայել բազմութիւնները:

«Հ.Մ.Ը.Մ.ը իր հիմնադրութենէն ցայսօր հանդիսացած է այդ ոգիին ու գաղափարին դրօշակիրն ու սերմնացանը եւ նորահաս սերունդներու ազգային դաստիարակութեան շերմանոցը:

«Եւ այսօրուանը, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը այդ ոգիին ու գաղափարին տօնն են: Յունաստանի նման փոքր գաղութի մը մեծ յաղթանակը եւ Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակներու մեծ ցուցակին վրայ նորովի յաւելում մը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՄՊԱՆ ՎԱՀՐԱՄ ԿԱԺՈՅԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Խօսքերէն վերջինը արտասանեց Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեան: Ան շնորհաւորեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն բացումը եւ հաստատեց. «Շուրջ մէկդարեայ գոյութեան ընթացքում Հ.Մ.Ը.Մ.ը մեծ ներդրում է ունեցել հայապահպանութեան ու հայակերտման բնագաւառում, նոր իմաստ հաղորդելով «Բարձրացիր-բարձրացուր» կարգախօսին, այն վերածելով ազգային ինքնութեան բանաձեւի, հանգրուանից հանգրուան գրանցելով նոր նուաճումներ, ցուցաբերելով նուիրում, դիմագրքաւելով ուժացմանն ու սպիտակ ջարդին, նպաստելով հայ երիտասարդի

ազգային նկարագրի ձեւաւորմանն ու պահպանմանը Սփիւռքում ու համայն աշխարհում: Այսօր ներկայ են աշխարհի բազմաթիւ երկրների Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցների ներկայացուցիչները, որոնք պատրաստ են դըրսեւորել պայքարի ու յաղթանակի իրենց կամքն ու կորովը, որն աշխարհասփիւռ հայութեան ինքնապահպանութեան առհաւատչեան է հանդիսանում:

«Հ.Մ.Ը.Մ.ի գործն ու առաքելութիւնը ոչ միայն իր անցեալն է, այլեւ անընդհատ նորացող ներկան ու Հայաստանի Հանրապետութեան անկախացումով պայմանաւորուած պայծառ ապագան»:

Դեսպան Կաթոյեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութեան մեր կեանքին մէջ եւ ըսաւ, որ «Արցախեան գոյապայքարն ու Հայաստանի Հանրապետութեան անընդհատ շարունակուող զարգացումը նոր ուժ ու լիցք են հաղորդում Սփիւռքի բազմադարեան գոյութեան ընթացքում ձեւաւորուած կառոյցներին, առաւել



Հարաւային Ամերիկայի պատուիրակութիւնը մուտք կը գործէ մարզադաշտ:

աւանդութիւնները այսուհետեւ էլ աւելի յաջողութեամբ պիտի ծառայեն հայապահպանութեան վեհ նպատակին: Այդ վստահութեան մասին են վկայում այսօր այս հրապարակում հաւաքուած հայ կորովի երիտասարդներն ու երիտասարդուհիները, որոնց յաղթանակի կամքը մեր ժողովուրդի գոյապայքարի յարատեւութեան ապացոյցն է»:

ՅՈՒՇԱՆՈՒԵՐՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄ

Խօսքերուն յաջորդեց յուշանուէրներու յանձնումը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ: Ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան յուշանուէրներ յանձնեց Յունաստանի վարչապետ եւ մշակոյթի նախարար Գոնասթանտինոս Գարամանյիսի (յուշանուէրը փոխանցըւեցաւ հանդիսութեան ներկայ, փոխադրական հարցերու փոխ նախարար Անասթասիոս Ներանձիսին), փոխ նախարար Անասթասիոս Ներանձիսի, Յունաստանի ՓԱՍՕՔ կուսակցութեան նախագահ Եորդօ Փափանտրէուի (յուշանուէրը ստանձնեց կուսակցութեան երեսփոխան, նախկին մարզիկ Սոֆիա Սաքորաֆա) եւ Յունաստանի մարմնամարզի նախարարութեան ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Թանասի Միկրօյլուի:

Օրուան հանդիսավար քոյր Մարի Եղիշէեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց,- պետական սպասարկութիւններ, նախարարութիւններ, լրագ-



Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեան:



րողներ, հաստատութիւններ, իրաւարարներ, բարերարներ,- որոնք նպաստեցին մարզախաղերու յաջողութեան: Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-

կան Վարչութիւնը յատուկ յուշանուէրներով պատուեց Աթէնքի 2004ի ողիմպիականին փայլուն արդիւնքներ արձանագրած յունահայ մարզիկներ Տիմիթ-

Յիշատակի նկար՝ Կեդրոնական Վարչութեան յուշանուէրներուն արժանացած յունահայ մարզիկներ Գրիգոր Խաչատուրեանի, Տիմիթրա Ասիլեանի եւ Արտիոմ Քիրէկեանի հետ:

րա Ասիլեանը (Յունաստանի փուլթի աղջկանց խումբին հետ արծաթ մետալի տիրացած), Արտիոմ Քիրէկեանը (յունահունիական ըմբշամարտի պրոնոգէ մետալակիր) եւ Գրիգոր Խաչատուրեանը (Յունաստանի հէնտպոլի տղոց խումբին հետ վեցերորդ հանդիսացած):

Դրօշակակիրներու մարզադաշտ մուտքը եղաւ յայտագրին յաջորդ բաժինը: Աթէնքի քաղաքապետութեան շեփորախումբին առաջնորդութեամբ, դաշտ մուտք գործեցին Հայաստանի, Յունաստանի, Հ.Մ.Ը.Մ.ի եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրոշ մարզախաղերու դրօշները: Վերջինը գրկած էին Աթէնքի ողիմպիականին մասնակցած յունահայ մարզիկները եւ չորրորդ մը՝ Մարիոս Պասմաճեան (ողիմպիականին Տրոջ հան-

Maison Mere
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt
Tel: (202) 3913296 - 3918542
Fax: (202) 3903899

Ramses Hilton
Tel: (202) 5758000 - 5744400
Direct: (202) 5751790

Zamalek
11 Hassan Sabry st., Degla center
Tel: (202) 3322121 - 3322130
Fax: (202) 3322130

VARTAN KAZANDJIAN

KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com

Joillier-Orfevre Fonde en 1920



դիսացած սուսերամարտի մրցումներում):

ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐԲԱՋԱՆԻՆ ՓԱԿԱՆ ԽՕՍՔԸ

Հանդիսուեթեան փակման խօսքով հանդէս եկաւ Յունահայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեան, որ գնահատանքը յայտնեց, մարզախաղերուն կազմակերպման համար եւ

Հ.Մ.Ը.Մ-ի ազգանուէր երթին անդրադառնալով ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը եւ միացեալ անկախ Հայաստանը ծնան 87 տարիներ առաջ եւ միասին քալեցին, մէկը Հայաստանի մէջ, միւսը՝ Սփիւռքի: Հ.Մ.Ը.Մ.ը տեսիլքով տողանցեց ամբողջ Սփիւռքի տարածքին եւ խանդավառեց բոլոր հայերը: Ո՛ր որ գնաց եղաւ դպրոց, առաքիլութիւն. խանդավառեց հայ պատանին ու երիտասարդը



Օրուան հանդիսավար յոր Մարի Եղիշէեան:

Եւ մեր ժողովուրդին սորվեցուց քալել խրոխտ երթով: Մեր կեանքին մէջ եղաւ այն դպրոցը, որ հաւատարիմ մնաց մեր ընտանեկան սրբութիւններուն, մեր մշակոյթին, Մեսրոպ Մաշտոցի Այբ-Բեն-Գիմին եւ սորվեցուց մեր ժողովուրդի գերագոյն արժեքները:

«Հ.Մ.Ը.Մ.ը տասնամեակներու ընթացքին ունեցաւ դաստիարակչական դեր եւ փաստօրէն եղաւ Սփիւռքի հայոց բանակը մինչեւ 1991 բուական, երբ այլեւս Հայաստանը անկախացաւ ու կազմեց իր սեփական բանակը»:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը կոչ ուղղեց Հ.Մ.Ը.Մ.ականներուն քալել խրոխտ եւ հասնիլ մինչեւ Արարատի բարձունքը, վստահ ըլլալով որ հայ ժո-



Յունահայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեան կը փոխանցէ իր պատգամը:



դովուրդը պիտի հետևի ու ընկերանայ իրեն: Քաղել մինչև Արարատ, Հ.Մ.Ը.Մ-ի նշանախօսքով՝ «Բարձրացիր-բարձրացուր» ի խորհուրդով:

ՓԱՎՈՒՄԸ

Հանդիսու-թեան աւարտը նշեց օրուան հանդիսավար քոյր Մարի Եղիշէեան, դիտել տալով որ «այսօրուան վապարոյրը կը փակուի, սակայն ներկայացումը չի վերջանար»: Ան յայտնեց, որ մրցումներն են, յաղթանակն է, պարտութիւնն



Գրօշակի հանդիսատար արարողութիւն:

է, եւ մեզմէ իւրաքանչիւրին ապրած վայրկեաններն են, որոնք պիտի

լորտ մը ստեղծելով ժողովուրդին մօտ:

մնան մեր կեանքին մէջ իբրեւ քաղցր յիշատակ: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերն են, որոնց ամէն մէկ վայրկեանը կ'արժէ ապրել լիովին:

Հուսկ, տեղի ունեցաւ մարզախաղերու բոցի առկայծում եւ մարզադաշտին մէջ կառուցուած Ծիծեռնակաբերդի յուշարձանի ձեռակերտին ընդմէջէն երկինք բարձրացան գոյնզգոյն լոյսեր, գեղեցիկ հրավառութեամբ խանդավառ մթնո-

TOGETHER WE ARE STRONGER
ՄԻԱՍԻՆ ԱԻԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ

ԱՖՀԻԼ AFHIL
Armenian Mutual Fund
 Tel. / Fax: 01 242556 - 242557



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԴՐԻ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ



ՄԱՍՆԱԿԻՑ ԽՈՒՄԲԵՐԸ



ԿԱՐՅՈՒ



22 ԽՈՒՄԲԵՐՈՒ ԵՒ 40 ԼՈՂՈՐԴՆԵՐՈՒ ՈՒԹՕՐԵԱՅ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՏՔ՝

ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԹԱԳԸ՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻՆ

- ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ԿԸ ՏԻՐԱՆԱՆ
ՎՈՒԹՊՈՒԼԻ
ՏՂՈՑ ՈՒ ԱՂԶԿԱՆՑ
ԱԽՈՑԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
- ԱՐԵՒԵԼԵԱՆ
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ԼՈՂՈՐԴՆԵՐԸ ԿԸ ԽԼԵՆ ԼՈՂԻ
19 ՈՍԿԻ ՄԵՏԱԼՆԵՐԻՆ 16Ը
- ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԱՐԱՏ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ
(Հ.Մ.Ա.Կ.)
ԽԱՂԵՐՈՒՆ ԿԸ ՄԱՄՆԱԿՑԻ
ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՏՂՈՑ ՈՒ
ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԵՐՈՎ



Արևիկի համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը, նախագահությամբ եղր. Ալյուր Շահինեանի, պարմութեան անցան պարտերպոյլի, վր- լիպոյլի եւ լողի մրցումներով: Թիւերն ու փունայները կրնան խօսիլ փալ իրենց մասին: Այդ չէ սակայն կարեւորը: Հիմնականն ու խորհրդանշականը համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու իրակա-



նացման փաստն է, երևո՞յթը: Այն, որ աշխարհի չորս ծագերէն Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ-մարզիկուհիներ, աւելի բան շաբաթ մը ապրեցան միասին, խաղացին իրարու դէմ, բայց յաղթել-պարտուելէ առաջ, հաղորդուեցան միութեանական առողջ մթնոլորտով եւ հայ մնալու խորհուրդով:

Երևոյթը անցաւ մարզականի սահմաններէն անդին: Յաղթողը ցաւեցաւ պարտուողին համար, պարտուողը գօրեպնդեց յաղթողը: Գաշտերուն մէջ եւ դաշտերէն դուրս, ամէն րեւոյ յարկանշական բան մը աչքի զարկաւ, ուշադ-

րութիւն գրաւեց: Ամէն պարտուիրակութիւն իր ուրոյն կնիքը դրաւ մարզախաղերուն վրայ եւ իր կեցուածքն ու նկարագիրը դրոշմեց: Խաղերը, իրենց կարգին, ամէն րեւոյ իրենց հիմնական առաջադրանքը պահեցին, նպատակը արժեւորեցին.- Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին րակ նոր սերունդի րդոց հայկականութեան ամրապնդում, այնպէս մը որ անոնք մակարդը հանդիսանան հայութեան նոր ոգեւորութիւններուն, ազգային նոր խանդավառութեան եւ զոյարեւման պայքարին:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրդ մարզախաղերուն «առիւծի բաժին»ը խլեցին պասքեթպոլի տղոց ու աղջկանց մրցումները, որոնք լայն հետաքրքրութիւն ստեղծեցին իրենց շուրջ, մասնակից խումբերու մեծ թիւին եւ սուր մրցակցութեան համար:

ՍԿԻԶԲԷՆ, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու տղոց խումբը կը նկատուէր տիտղոսին գլխաւոր թեկնածուն: 1981ին եւ 1997ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ա. եւ Ե. խաղերու պասքեթպոլի առաջնութեան տիրացած շրջանը պատրաստուած էր շատ լաւ եւ տրամադիր չէր համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ. խաղերու, 1990ի, իր փորձառութիւնը կրկնել, երբ վերջին պահուն ան տեղի կու տար Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ խումբին դէմ:

Պասքեթպոլի տղոց մրցումները տեղի ունեցան 24-30 Յուլիս 2005ին, Նիքէայի «Փլաթոն» եւ Քալիթէայի «Էսփերոս» մարզադաշտերուն վրայ: Մասնակից 10 խումբերը հետեւեալ ձեւով բաժնուած էին երեք խմբակներու.-

●Ա. Խմբակ.- Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Ֆրանսա (Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս), Գանատա եւ Հարաւային Ամերիկա:

Յունաստան - Աւստրալիա մրցումէն:



Գահիրէ - Թեհրան մրցումէն:

●Բ. Խմբակ.- Թեհրան (Հ.Մ.Ա.Կ.), Արեւելեան Միացեալ Նահանգներ եւ Գահիրէ (Հ.Մ.Ը.Մ.-Արարատ):

●Գ. Խմբակ.- Յունաստան, Աւստրալիա եւ Աղեքսանդրիա (Հ.Մ.Ը.Մ.-Կամք):

Արեւմտեան Միացեալ Նահանգներու տղոց խումբը գրաւեց Ա. խմբակին առաջին դիրքը, երբ իր երեք մրցումներն ալ աւարտեց յաղթանակով: Գանատայի խումբը արձանագրեց երկու յաղթանակ, Ֆրանսայի խումբը՝ մէկ յաղթանակ, իսկ Հարաւային Ամերիկայի խումբը հանդիսականները տպաւորեց մարզական իր բարձր ոգիով:

Ստորեւ՝ Ա. խմբակի մրցումներուն արդիւնքները.-

Գանատա - Արժանթին 75-35

Արեւմտեան Մ. Ն. - Ֆրանսա 73-72

Ֆրանսա - Արժանթին 83-35

Արեւմտեան Մ. Ն. - Գանատա 80-60

Ֆրանսա - Գանատա 66-64

Արեւմտեան Մ.Ն. - Արժանթին 119-39

Բ. ԽՄԲԱԿԻՆ ՄԷՋ, անակնկալ կազմը Հ.Մ.Ա.Կ.ի

Թեհրանի խումբն էր, որ իր առաջին մրցումին պարտութեան մատնեց Արեւելեան Միացեալ Նահանգներու խումբը եւ բոլորին ազդարարեց, թէ ինք կրնայ տիտղոսին լուրջ մրցակից ըլլալ:

Այս խմբակը ունեցաւ երեք մրցումներ, որոնց արդիւնքները պարզեցին Հետեւեալ պատկերը.-

- Թեհրան - Գահիրէ 75-64
- Թեհրան - Արեւելեան Մ.Ն. 73-60
- Արեւելեան Մ.Ն. - Գահիրէ 89-46

Գ. ԽՄԲԱԿԻՆ ՄԷՋ, Յունաստանի խումբը ունէր սեփական դաշտի եւ համակիրներու առաւելութիւնը: Խումբը կատարեց տպաւորիչ մրցումներ եւ յաջողաբար պարտութեան մատնեց Աւստրալիոյ եւ Ադէքսանդրիոյ խումբերը:

Այս խմբակին արդիւնքները ունեցան Հետեւեալ պատկերը.-

- Յունաստան - Աւստրալիա 66-50
- Յունաստան - Ադէքսանդրիա 84-49
- Աւստրալիա - Ադէքսանդրիա 100-46

Հետեւաբար, քառորդ աւարտականի հանգրուան անցան Ա. եւ Բ. խմբակներէն առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը (Ա. խմբակէն՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Գանատա, Ֆրանսա, Բ. խմբակէն՝ Թեհրան, Արեւելեան Միացեալ Նահանգներ, Գահիրէ) եւ Գ. խմբակի առաջին երկու խումբերը (Յունաստան, Աւստրալիա):

Քառորդ աւար-



Աւստրալիա - Արեւելեան Մ. Նահանգներ մրցումէն:

տականի մրցումներուն զուգահեռ, կատարուեցաւ նաեւ Ա. եւ Գ. խմբակներու վերջին դիրքերը գրաւած խումբերուն միջեւ մրցում մը, որ իրարու դէմ հանեց Հարաւային Ամերիկայի եւ Ադէքսանդրիոյ կազմերը: Մրցումը աւարտեցաւ Հարաւային Ամերիկայի խումբին յաղթանակով՝ 70-48 արդիւնքով:

Քառորդ աւարտականի մրցումները տեղի ունեցան Նիքէայի «Փլաթոն» մարզադաշտին վրայ, առողջ մրցակցութեան խանդավառ մթնոլորտի մէջ:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները.-

- Արեւմտեան Մ.Ն. - Գահիրէ 109-48
- Թեհրան - Գանատա 96-89
- Ֆրանսա - Աւստրալիա 75-50
- Յունաստան - Արեւելեան Մ.Ն. 74-58

Կիսաւարտականին, Ա. խմբակին առաջին երկու դիրքերը գրաւած խումբերը՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներ եւ Ֆրանսա դարձեալ իրարու դէմ յանդիման եկան: Այս անգամ սակայն, Արեւմտեանի տղաքը անխնայ եղան եւ 97-49 արդիւնքով պարտութեան մատնեցին իրենց մրցակիցը: Ա. հանգրուանին անոնք տարած էին դժուար յաղթանակ մը, 73-72 արդիւնքով:

Թեհրանի եւ Յունաստանի խումբերուն կիսաւարտական երկրորդ մրցումը շնչասպառ ըրաւ հանդիսատեսները,

ԽԱՂԵՐՈՒ ԼՈՒՍԱՆՑՔԻՆ

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրդ մարպախաղերը ունեցան իրենց գրքոյկը, գլխարկն ու շապիկը:

Գրքոյկը ընդգրկեց ողջոյնի խօսքեր, մարպախաղերուն պատմականը, այս մարպախաղերուն յայտագիրը եւ մասնակցող շրջաններուն մասին տեղեկութիւններ: Բաժին մըն այ յատկացուեցաւ ծանուցումներու:



Մարպախաղերու խորհրդանշանով Հ.Մ.Ը.Մ.ի գլխարկներն ու շապիկները վաճառուեցան մարպադաշտերու մուտքին:

● Մարպախաղերուն չորրորդ օրը, Հինգշաբթի, 28 Յուլիսը յատկանշական օր մը եղաւ մասնակից շրջաններու պատուիրակութիւններուն համար, որոնք միօրեայ հաճելի պտոյտով մը առիթը ունեցան վայելելու Յունաստանի արեւն ու ծովը եւ ծանօթանալու երեք կղզիներու՝ Իտրա, Փորօ եւ Էդինա:

Պտոյտին մասնակցեցան մարպիկներ, պատուիրակութիւններու վարչականներ եւ յունահայեր, ընդամենը՝ 415 հոգի:

● 29 Յուլիսին, Հ.Յ.Գ. Գոքինիոյ կոմիտէն Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնները ճաշկերոյթով մը պատուեց «Չաւարեան» կեդրոնի դարար տանիքը:

● Մարպախաղերու փակման հանդիսութեան ներկայ գտնուելու համար, փափաքողներուն խորհրդանշական սակով փուլմաններ տրամադրուեցան Հելինիքոյի սֆօպոլի մարպադաշտ երթ ու դարձը ապահովելու համար:



Հարաւային Ամերիկա - Արեւմտեան

Մ. Նահանգներ մրցումէն:

Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու եւ Հ.Մ.Ա.Կ-ի Թեհ-

որոնք շրջերու վրայ հետեւեցան հաւասար ուժերով մրդաւած ճակատումին: Ի վերջոյ, յաղթանակը ժպտեցաւ Թեհրանի տղոց, որոնք 73-70 արդիւնքով հասան աւարտական փուլ:

Աւարտականէն առաջ, տեղի ունեցաւ երրորդ-չորրորդի մրցումը՝ Յունաստանի եւ Ֆրանսայի խումբերուն միջեւ: Մրցումը աւարտեցաւ 81-72 արդիւնքով, ի նըպաստ՝ Յունաստանի:

Սպասուած աւարտականը իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.-



Ֆրանսա - Գանատա մրցումէն:

րանի տղոց խումբերը: Փորձաուժիւնը եւ ֆիզիքական տուկունութիւնը ունեցան իրենց խօսքը եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու տղաքը 97-72 արդիւնքով տարին փայլուն յաղթանակը, երրորդ անգամ ըլլալով բարձրացնելով համա-Հ.Մ.Ը.Մ.ական պասքեթպոլի առաջնութեան բաժակը:

We Can Light Up A City

G. AYANIAN & SONS

Electricity
Pumps
Lighting
Air Conditioning
Video Phone

G. AYANIAN & SONS - BEIRUT

Dora: 01-255 222/3/4/5/6 Gemmayze: 01-447 000 - 447 940 Mobile: 03-627 728/9

ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԱՂՋԿԱՆՑ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Պասքեթպոլի աղջկանց մրցումներուն կը սպասուէր համա-Հ.Մ.Ը.Մ.ական նոր ախոյեան մը եւ բոլորին հայեացքները ուղղուած էին Յունաստանի խումբին: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին մարզախաղերուն, 1981ին, ախոյեանութեան տիրացած էին Լիբանանի աղջիկները, իսկ 1997ին, Ե.մարզախաղերուն, Արեւելեան Միացեալ Նահանգներու աղջիկները:

Ախոյեանութեան տիրողոսին համար մրցեցան վեց խումբեր, մէկ խմբակի մէջ- Գանատա, Յունաստան, Թեհրան (Հ.Մ.Ա.Կ.), Լիբանան, Աւստրալիա եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներ:

14 մրցումներէ ետք ի յայտ եկան տիրողոսին գլխաւոր թեկնածուները՝ Յունաստանի եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու խումբերը, որոնք արձանագրեցին չորսական յաղթանակներ: Թեհրանի խումբը արձանագրեց 3 յաղթանակ, Լիբանանի խումբը՝ 2 յաղթանակ, Աւստրալիոյ խումբը՝ 1 յաղթանակ, իսկ Գանատայի խումբը՝ ոչ մէկ յաղթանակ:

ՔԻՉ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի երբեմնի միջ-մասնաճիւղային խաղերուն (Հալէպ, Պէյրութ) մթնոլորտը վերակենդանացնող համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը ունին շուրջ քառորդ դարու պատմութիւն:

1981էն մինչեւ օրս կազմակերպուած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական եօթը մարզախաղեր, չորսը՝ յատկացուած պասքեթպոլի, իսկ երեքը՝ ֆութպոլի:

1997էն սկսեալ, պասքեթպոլի խաղերուն ընկերացած են վոլիպոլի մրցումներ, իսկ այս տարի, առաջին անգամ ըլլալով, նաեւ՝ լողի մրցումներ:

Ֆութպոլի խաղերու կողքին, 1993էն սկսեալ, կիրարկուած են արեթրիկ մի մրցումներ:

Մարզախաղերուն Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններուն մասնակցութեան պատկերը կրած է փոփոխութիւններ: 1981ի Ա. մարզախաղերուն մասնակցած են 8 շրջաններ, Բ. մարզախաղերուն (1985)՝ 7 շրջաններ, Գ. մարզախաղերուն (1990)՝ 9 շրջաններ, Դ. մարզախաղերուն (1993)՝ 7 շրջաններ, Ե. մարզախաղերուն (2001)՝ 9 շրջաններ, Զ. մարզախաղերուն (2001)՝ 10 շրջաններ, իսկ վերջին՝ Է. մարզախաղերուն 10 շրջաններ, առաւել՝ հիւրաբար Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը:



Արեւմտեան Մ. Նահանգներ - Յունաստան մրցումէն:

Մրցումներուն արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը-

- Արեւմտեան Մ.Ն. - Յունաստան 77-49
- Գանատա - Լիբանան 38-95
- Գանատա - Արեւմտեան Մ.Ն. 16-142
- Յունաստան - Աւստրալիա 79-41
- Արեւմտեան Մ.Ն. - Թեհրան 92-61
- Լիբանան - Աւստրալիա 59-35
- Գանատա - Յունաստան 46-67
- Լիբանան - Թեհրան 59-66
- Գանատա - Աւստրալիա 46-66
- Արեւմտեան Մ.Ն. - Լիբանան 87-26
- Թեհրան - Յունաստան 67-72
- Աւստրալիա - Թեհրան 33-79
- Յունաստան - Լիբանան 57-52
- Գանատա - Թեհրան 45-97

Վերոյիշեալ մրցումներու լոյսին տակ, աւարտականը իրարու դէմ հանեց Յունաստանի եւ Արեւմտեան Միացեալ



Հարաւային Ամերիկա - Լիբանան մրցումէն:



Յունաստան - Թեհրան մրցումներ:

Նահանգներու խումբերը եւ աւարտեցաւ երկրորդին յաղթանակով, 55-85 արդիւնքով:

Պասքեթպոլի աղջկանց մրցումները տեղի ունեցան Քալիթէյի «Էսփերոս» եւ Նիքէյի «Փլաթոն» մարզադաշտերուն վրայ: Աւարտականը կատարուեցաւ Ռենտիի «Մելինա Մերփուրի» մարզադաշտը:

ՎՈՒՊՈՒՆԻ ՏՂՈՅ ԵՒ ԱՂԶԿԱՆՑ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

1997ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. մարզախաղերէն ետք, վուլիպոլը երկրորդ անգամ ըլլալով նկատի կ'առնուէր համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու յայտագրին մէջ: 1997ին, տղոց ու աղջկանց տիտղոսները խլած էին Արեւմտեան Միացեալ Նահանգներու խումբերը: Այս անգամ, սակայն, պատկերը եղաւ տարբեր:

Տղոց մրցումներուն մասնակցեցան չորս խումբեր.- Յունաստան, Պուլկարիա, Արեւմտեան Միացեալ Նահանգներ եւ Արեւելեան Միացեալ Նահանգներ: Յունաստանի խումբը եղաւ անխալ: Առանց որեւէ պարտութեան, յաջորդական երեք յաղթանակով, հասաւ աւարտական հանգրուան, ուր հակառակ շատերու նախատեսութեան, ոչ թէ Արեւմտեան Միացեալ Նահանգներու, այլ Արեւելեան Միացեալ Նահանգներու խումբը գտաւ իր դիմաց: Աւարտական խաղը աւարտեցաւ 3-0 արդիւնքով եւ ցնծութիւնը եղաւ յունական:

Մրցումները պարզեցին հետեւեալ արդիւնքները.-

Յունաստան - Պուլկարիա 3-0

Արեւելեան Մ.Ն. - Պուլկարիա 3-0

Արեւմտեան Մ.Ն. - Յունաստան 1-3

Պուլկարիա - Արեւմտեան Մ.Ն. 0-3

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating/air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer.
The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԴՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ



Պուլկարիա - Արեւմտեան Մ. Նահանգներ մրցումէն:



Արեւմտեան Մ. Նահանգներ - Յունաստան մրցումէն:

Արեւելեան Մ.Ն. - Յունաստան 0-3

Արեւելեան Մ.Ն. - Արեւմտեան Մ.Ն. 0-3

Աւարտական.- Յունաստան - Արեւելեան Մ.Ն. 3-0



Աղջկանց մրցումները ունեցան խորհրդանշական բնոյթ, որովհետեւ երկու խումբի ներկայութեան, պէտք եղաւ միայն մէկ մրցումի՝ ճշդելու համար վոլիպոլի աղջկանց ախոյեանը: Հարաւային Ամերիկայի աղջիկները իրենց խումբին անունը համա-Հ.Մ.Ը.Մ.՝ ապահովեցին խաղերու

պատմութեան մէջ արձանագրեցին, երբ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեցին Արեւելեան Միացեալ Նահանգներու խումբը:

Յայտենք, որ վոլիպոլի տղոց ու աղջկանց մրցումները տեղի ունեցան Ռենտի «Մելինա Մերքիւրի» մարզադաշտը:

ԼՈՂԸ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Լողը ունեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.՝ ապահովեցին մարզախաղերու իր առաջին ախոյեանները: Արեւելեան Միացեալ Նահանգներէն Ալլի Պօղոսեան (4 ոսկի մետալ), Կրէկ եւ Բաֆֆի Կարապետեաններ (երեքական ոսկի մետալներ) եղան լողի մրցումներուն զլխաւոր աստղերը: Վերջինին արդիւնքը (23' 57) , 50 մեթր ազատ լողի մրցումներուն, նկատուեցաւ Միացեալ Նահանգներու 10 լաւագոյն արդիւնքներու շարքին:

Լողի 19 մրցումներէն 16ին ոսկի մետալներուն տիրացան Արեւելեան Միացեալ Նահանգներու լողորդները: Մնացեալ երեք ոսկի մետալներուն արժանացան Արեւմտեան Միացեալ Նահանգներու լողորդները:

Լողի մրցումներուն մասնակցեցան 40 լողորդներ՝ հետեւեալ շրջաններէն.- Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Արեւելեան Միացեալ Նահանգներ, Հարաւային Ամերիկա, Յունաստան, Աւստրալիա, Գանատա, Թեհրան (Հ.Մ.Ա.Կ.) Ֆրանսա, եւ Կիպրոս:

Մրցումները տեղի ունեցան Նիքէյի «Փլաթոն» մարզադաշտին լողաւազանը եւ պարզեցին հետեւեալ պատկերը.-

50 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ (ՏՂԱՔ)

1. Կրէկ Կարապետեան 30, 68" (Արեւելեան Մ.Ն.)
2. Սթիվ Կարապետեան 33, 05" (Արեւելեան Մ.Ն.)
3. Հայկ Առաքելեան 33, 69" (Յունաստան)

50 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ (ԱՂՋԻԿՆԵՐ)

1. Ալլի Պօղոսեան 35, 08" (Արեւելեան Մ.Ն.)
2. Նար Պաղտասարեան 38, 25" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Արմէն Կաւուր 41, 83" (Արեւելեան Մ.Ն.)





100 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ (ՏՂԱՔ)

1. Մայքըլ Զէննէթեան 1' 09, 35" (Արեւելեան Մ.Ն.)
2. Հայկ Առաքելեան 1' 16, 10" (Յոռնաստան)
3. Քենկո Սողոյեան 1' 20, 12" (Արեւմտեան Մ.Ն.)

50 ՄԵԹՐ ԿՈՒՐԾՔԻ ՎՐԱՅ (ՏՂԱՔ)

1. Կրէկ Կարապետեան 33, 10" (Արեւելեան Մ.Ն.)
2. Մայքըլ Զանազանեան 36, 70" (Արեւելեան Մ.Ն.)
3. Պարգեւ Ճիրոճխու 37, 51" (Կիպրոս)



50 ՄԵԹՐ ԿՈՒՐՔԻ ՎՐԱՅ (ԱՂՋԻԿՆԵՐ)

1. Անի Պապիկեան 41, 66" (Արեւմտեան Մ.Ն.)
2. Գարլա Արմէնեան 42, 27" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Լին Թիւթիւնճեան 42, 82" (Արեւելեան Մ.Ն.)

100 ՄԵԹՐ ԿՈՒՐԾՔԻ ՎՐԱՅ (ՏՂԱՔ)

1. Կրէկ Կարապետեան 1' 16, 97" (Արեւելեան Մ.Ն.)
2. Քենկո Սողոյեան 1' 27, 33" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Պարգեւ Ճիրոճխու 1' 28, 16" (Կիպրոս)



Philippe Photo Trade

Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

Philippe Photo Trade

Assadourian Bros.

Համա-Հ.Մ.Ը.- Մ.ական 7բդ մար-
զախաղերու լուս-
գոյնները ընտր-
ւեցան եւ փակման
համը ի ս ու թ ե ա ն
հ ա մ ա պ ա տ ա ս -
խան յուշանուէր-
ներու արժանա-
ցան հետեւեալնե-
րը-

ՄԱՐԶԱԽԱՂԵՐ

● Լ ա լ ա գ ո յ ն
մարզիկ - պասքեթ-
պոլիստ Թամար
Գ ա թ ա ր ո յ ե ա ն ,
Արեւմտեան Միաց-
եալ Նահանգնե-
րէն

● Լ ա լ ա գ ո յ ն
իրաւարար - Մի-
խայիս Մաքետո-
նոփոլոս

● Լ ա լ ա գ ո յ ն
մարզիչ - Խրիսթոս
Ռուսեան (վոլի-
պոլ), Յունաստա-
նէն

● Լ ա լ ա գ ո յ ն
վարչական - Վա-
հան Չալրքեան,
Գ ա ն ա տ ա յ է ն
(Շրջանային Վար-
չութեան անդամ)

● Տիպար մար-
զիկ - պասքեթպո-
լիստ Վարուժան
Շ ա հ պ ա պ ե ա ն ,
Թեհրանի Հ.Մ.Ա.-
Կ.էն

● Մարզախաղե-
րու ընդհանուր
դ ա ս ա լ ո թ մ ա ն
ստաջին դիրքը
գրաւելուն համար,
նախագահ «Ալպէր
Շահինեանի քա-
ժակ»ին արժանա-
ցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւ-
մրտեան Միացեալ
Ն ա հ ա ն գ ն եր ու
շրջանը:

**100 ՄԵԹՐ ԿՈՒՐԾՔԻ
ՎՐԱՅ (Ա.ՂՋԻԿՆԵՐ)**

1. Անի Պապիկեան 1' 34, 02" (Արեւմտեան Մ.Ն.)
2. Նար Պաղտասարեան 1' 35, 42" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Լին Թիւթիւնճեան 1' 35, 76" (Արեւելեան Մ.Ն.)

**200 ՄԵԹՐ ԿՈՒՐԾՔԻ
ՎՐԱՅ (Ա.ՂՋԻԿՆԵՐ)**

1. Գարլա Արմէնեան 3' 27, 14" (Արեւմտեան Մ.Ն.)
2. Նար Պաղտասարեան 3' 30, 05" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Լին Թիւթիւնճեան 3' 35, 76" (Արեւելեան Մ.Ն.)

**50 ՄԵԹՐ ԹԻԹԵՆՆԻԿ
(ՏՂԱՔ)**

1. Սթիվ Կարապետեան 29, 73" (Արեւելեան Մ.Ն.)
2. Քենկո Սողոյեան 30, 51" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Արթիկ Եսայեան 31, 51" (Թեհրան)

**50 ՄԵԹՐ ԹԻԹԵՆՆԻԿ
(Ա.ՂՋԻԿՆԵՐ)**


1. Լին Թիւթիւնճեան 33, 76" (Արեւելեան Մ.Ն.)
2. Նար Պաղտասարեան 34, 22" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Մ. Գորթնի 35, 03" (Արեւելեան Մ.Ն.)

**100 ՄԵԹՐ ԹԻԹԵՆՆԻԿ
(Ա.ՂՋԻԿՆԵՐ)**

1. Լին Թիւթիւնճեան 1' 17, 20" (Արեւելեան Մ.Ն.)
2. Մ. Գորթնի 1' 24, 97" (Արեւելեան Մ.Ն.)

**50 ՄԵԹՐ ԱԶԱՏ
(ՏՂԱՔ)**

1. Բաֆֆի Կարապետեան 23, 57" (Արեւելեան Մ.Ն.)
2. Սթիվ Կարապետեան 26, 27" (Արեւելեան Մ.Ն.)
3. Արթիկ Եսայեան 26, 92" (Թեհրան)



50 ՄԵԹՐ ԱԶԱՏ (Ա.ՂՋԻԿՆԵՐ)

1. Աշլի Պողոսեան 30, 05" (Արեւելեան Մ.Ն.)
2. Նար Պաղտասարեան 31, 56" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Մ. Գորթնի 32, 07" (Արեւելեան Մ.Ն.)

100 ՄԵԹՐ ԱԶԱՏ (ՏՂԱՔ)

1. Բաֆֆի Կարապետեան 53, 85" (Արեւելեան Մ.Ն.)
2. Արթիկ Եսայեան 1' 02, 26" (Թեհրան)
3. Քենկո Սողոյեան 1' 04, 60" (Արեւմտեան Մ.Ն.)

100 ՄԵԹՐ ԱԶԱՏ (Ա.ՂՋԻԿՆԵՐ)

1. Աշլի Պողոսեան 1' 06, 91" (Արեւելեան Մ.Ն.)
2. Նար Պաղտասարեան 1' 11, 29" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Մ. Գորթնի 1' 14, 45" (Արեւելեան Մ.Ն.)

200 ՄԵԹՐ ԱԶԱՏ (ՏՂԱՔ)

1. Բաֆֆի Կարապետեան 2' 12, 05" (Արեւելեան Մ.Ն.)
2. Կրէկ Կարապետեան 2' 19, 45" (Արեւելեան Մ.Ն.)
3. Արթիկ Եսայեան 2' 23, 86" (Թեհրան)

200 ՄԵԹՐ ԱԶԱՏ (Ա.ՂՋԻԿՆԵՐ)

1. Աշլի Պողոսեան 2' 31, 93" (Արեւելեան Մ.Ն.)
2. Նար Պաղտասարեան 2' 39, 23" (Արեւմտեան Մ.Ն.)
3. Գարլա Արմէնեան 2' 54, 76" (Արեւմտեան Մ.Ն.)

4x50 ՄԵԹՐ (ՏՂԱՔ)

1. Արեւելեան Մ. Նահանգներ 1' 42, 92"
2. Արեւմտեան Մ. Նահանգներ 2' 01, 31"
3. Հարաւային Ամերիկա 2' 15, 44"

4x50 ՄԵԹՐ (Ա.ՂՋԻԿՆԵՐ)

1. Արեւելեան Մ. Նահանգներ 2' 11, 67"
2. Թեհրան 2' 42, 13"



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԴՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԳԱՇՎԵՐՈՅԹԸ ՀԱՅԱՇՈՒՆՉ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն նախափերջին օրը, Շաբաթ, 30 Յուլիսի երեկոյեան, մայրաքաղաք Աթէնքի Վուլայի ծովեզերեայ «Պլու Ուոթըր» կեդրոնը ժամադրավայրը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ընտանիքին եւ համակիրներուն, որոնք եկան անգամ մը եւս տեսնելու համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերու մարզիկ-մարզիկուհիները, հայաշունչ մթնոլորտի մէջ ոգեւորիչ պահեր անցնելու անոնց հետ:

Ճաշկերոյթին ներկայ գտնուեցան լիազուգար նիստերու առիթով Աթէնք գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները եւ միջ-դիւանական Զ. խորհրդաժողովին պատուիրակութիւնները:

Պաշտօնական բաժինով, խօսքեր արտասանեցին քոյր Մարի Եղիշէան, մարզախաղերու կեդրոնական յանձնախումբի ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Այս առիթով, պատուիրակութիւններու ներկայացուցիչները կատարեցին յուշանուէրներու փոխանակում: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, իր կարգին, յուշանուէրով մը պատուեց մարզախաղերու նախագահ եղբ. Ալպէր Շահինեանին: Մթնոլորտը ճոխացուց երգիչ Կարօ Պարտաքճեան: Մթնոլորտէն խանդավառուած՝ տեղի ունեցան նուիրատուութիւններ:

Ճաշկերոյթը ազգային-յեղափոխական երգերով շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր:



Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան կը պարգևատրէ մարզախաղերու նախագահ եղբ. Ալպէր Շահինեանը:

Պատուիրակութիւններու պատասխանատուները կը կատարեն յուշանուէրներու փոխանակումներ



ՑՏԵՍՈՒԹԻՒՆ ԱԹԷՆՔ, ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.



- ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԽՕՍՔԵՐՈՎ,
ՅՈՒՇԱՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑՈՒՄՈՎ
ԵՒ ԱԽՈՑԵԱՆՆԵՐՈՒ
ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐՈՎ
«ԳԵՂԵՑԻԿ ՀԻՔԻԱԹԸ»
ԿԸ ՀԱՄՆԻ ԻՐ ԱԻԱՐՏԻՆ



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները Յունաստանի Աթենքի գործոց նախարարին (Կեդրոնը, յուշանուէրով) եւ մարզախաղերու նախագահ եղբ. Ալպէր Շահինգեանի հետ(Եռագոյն ժապաւէնով):

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրդ մարզախաղերուն խանդավառութիւնը, անմոռանալի մրցումներով, արդիւնքներով եւ ընկերային հոյակապ մթնոլորտով, իր լրումին հասաւ փակման փառաւոր հանդիսութեամբ, որ տեղի ունեցաւ 31 Յուլիս 2005ի երեկոյեան ժամը 9.30ին, Աթէնքի սոֆթպոլի ողիմպիական մարզադաշտին մէջ:

Հանդիսութեան իրենց ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ը պատուեցին Յունաստանի ներքին գործոց նախարար Փրոքսիս Փաւլոփուլոս, արտաքին գործոց նախկին նախարար Ղրիղորիս Նիոթիս, մարմնամարզի նախարարութեան ընդհանուր քարտուղար Գոսթաս Բուքուտիմոս, Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեան, Նիքէայի քաղաքապետ Սթելիոս Պէնէթթիս,



Ձախին՝ Կեղրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան Հ.Մ.Ը.Մ.ի յուշանուէրը կը յանձնէ Յունաստանի մարմնամարզի նախարարութեան ընդհանուր քարտուղար Գոսթաս Քուրտոսիմոսին: Աջին՝ Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան Յունաստանի վարչապետին յուշանուէրը կը փոխանցէ Գոսթաս Քուրտոսիմոսին:

Յունահայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեան, Յունաստանի Ազգային Իշխանութեան եւ Հ.Յ.Դ. Կեղրոնական Կոմիտէի անդամներ:

Ներկայ էին նաեւ մարզախաղերու նախագահ եղբ. Ալպէր Շահինեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներէն), Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան

անդամներ, միջ-դիւանական Զ. Խորհրդրդաժողովի արեւիթով Աթէնք գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու ղեկաններ, Հ.Մ.Ը.-

BDF ●●●			Schwarzkopf PROFESSIONAL	IGORA royal
NIVEA Creme	NIVEA Hair Care	NIVEA FOR Men	b ^o bonacure	SILHOUETTE
NIVEA VITAL	NIVEA VISAGE	NIVEA Beaute	IGORA VARIO BLOND PLUS	IGOFLEUR
NIVEA Shower	NIVEA Soap	NIVEA SUN	Vital STYLING	Natural STYLING
NIVEA Soft	NIVEA نيسيا	NIVEA DEODORANT	Clynol hair	Bodycology
atrix	LIMARA	labello	MATIS	Degussa
SUD S.A.L.			VitaTrace Nutrition Ltd	

AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10

Մ.ի Յունաստանի սկաուտական շարքեր եւ, վերջապէս, մարզախաղերու մասնակից մարզիկ-մարզիկուհիներ:

Մարզադաշտը զարդարւած էր մարզախաղերու, Հ.Մ.Ը.Մ.ի, Հայաստանի եւ Յունաստանի ազգային դրօշներով:

Հանդիսութեան սկիզբը, շրջան առ շրջան, մարզիկ-մարզիկուհիները տողանցեցին իրենց երկիրներու ազգային դրօշներով: Տողանցքը գլխաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի սկաուտական կազմը իր դրօշներով: Տողանցողներէն շատերը, պաշտօնական հիւրերու առջեւէն անցած պահուն, յիշատակին ունէրներ նետեցին ներկայ ժողովուրդին:



Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Եթիմեան յուշանուէր մը կը փոխանցէ մարզախաղերու նախագահ եղբ. Ալլաէր Թահինեանին:

ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔԸ

Տողանցքէն ետք, օրուան հանդիսավար քոյր Մարի Եղիշէան հայերէն եւ յունարէն լեզուներով յայտնեց, որ օրե-

րը անցան, մրցումները հասան իրենց աւարտին եւ մարզական խումբերը սուր մրցակցութենէ ետք յանգեցան ակնկալուած յաղթանակներու, մեծ ջանք ի գործ դնելով ի խնդիր լաւագոյնին ու բարձրագոյնին: Հանդիսավար քոյրը ըսաւ, թէ բոլորս ապրեցանք մարզադաշտերէն ներս մրցումներուն ազնիւ մրցակցութեան մթնոլորտը եւ, մարզիկներուն հետ միասին, հանդիսատեսներն ալ ապրեցան մարզական տաղնապի, կիրքի, յուզումի եւ խանդավառութեան պահեր, այս ձեւով իւրաքանչիւրը իր մասնակցութիւնը բերելով մարզախաղերու յաջող ընթացքին:

Շարունակելով, քոյրը աւելցուց. «Համա-Հ.Մ.Ը.Մ.ա-

կան մարզախաղերը իրենց յաջող կազմակերպումով եւ խումբերու մակարդակով անմոռանալի իրադարձութիւն



**Sarkis
or
Paul**

SASSOUNIAN INC.
Tools - Supplies - Machines
 Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
 (213) 627-1206
 Outside Ca: 1-800-544-4419
 Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com

E-mail: info@sassouniantools.com



մը հանդիսացան յունահայ մարզական կեանքին մեջ: Դաշտերէն ներս խումբերու մրցակցութիւնը եւ մեծ թիւով մարզասերներու ներկայութիւնը խրթան կը հանդիսանան եւ կը գօտեպընդեն բոլորս, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական երթը շարունակուի: Անշուշտ, գլխաւոր դերակատարները հանդիսացան Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները, որոնք մեզի պարգեւեցին ազգային յուզումի եւ հպարտութեան պահներ»:

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՅՈՒՄԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Յաջորդեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրդ. մարզախաղերու կեդրոնական

յանձնախումբին խօսքը: Ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան կարճ խօսքով մը յայտարարեց մարզախաղերուն աւարտը եւ այս առթիւ վառած ջահին շիջումը: Ապա, ան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները՝ յուշանուէրներու եւ արոյեանական բաժակներու տուչութիւնը կատարելու համար:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՅՈՒՇԱՆՈՒԵՐԸ ԵՒ ԽՕՍՔԸ

Առաջին յուշանուէրը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի ձեռամբ,

փոխանցուեցաւ Յունաստանի ներքին գործոց նախարար Փրոքօփիս Փալլոփուլոսին:

Նախարարը յուշանուէրը ստանալով արտասանեց խօսք մը, նշելով, որ իրեն եւ յունական պետութեան համար մեծ պատիւ է համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն Աթէնքի մէջ կատարումը: Պատիւ եւ ուրախութիւն ներկաներուն, նոյնիսկ անոնց որոնք զանազան պատճառներով չկարողացան ներկայ գտնուիլ:

Նախարար Փալլոփուլոս յայտնեց, որ Սփիւռք ունեցող հայ եւ յոյն ժողովուրդները գիրենք հիւրընկալող երկիրներուն մէջ սիրուած ու յարգուած հա-

Լաքականութիւններ են: Յարգը-
լած են մանաւանդ այն պատճա-
ռով, որ օրինաւոր քաղաքացիի
հանգամանքէն անդին, անոնք
իրենց մասնակցութիւնը կը բե-
րեն իրենց ապրած երկրի տար-
բեր մարզերու վերելքին եւ աչքի
կը զարնեն իրենց տաղանդով,
հնարամտութեամբ եւ աշխա-
տունակութեամբ:

«Մառախելով հանդերձ տար-
բեր հայրենիքներու, անոնք
վառ կը պահեն իրենց ազգային
պատկանելիութիւնն ու գիտակ-
ցութիւնը: Ահա՛ այս է որ
կ'ընէք նաեւ դուք, իբրեւ հայեր,
հոս կամ այլուր», *հաստատեց
նախարարը:*

Ապա, շարունակելով, ան ըսաւ.
«Հայ ժողովուրդը ամենուրեք կը յատ-
կանշուի դրական քանի մը կէտով.-

ա) Պայքար՝ ազատութեան համար:
Պայքար, որ ձեռք ձգուած է արիւնով,
մարտերով ու յաղթանակներով:



**Մարզախաղերու փակման հետ՝
վար կ'առնուին դրօշները:**

բ) Պայքար՝ մարդկային եւ, հետե-
ւաբար, համամարդկային արժեքներու
պահպանման ու զարգացման համար»:

*Իր խօսքը եզրափակելով, նախարար
Փաւլոփովըս դիտել տուաւ, որ փակ-
ման այս հանդիսութիւնը փաստօրէն
սկիզբ մըն է, որպէսզի կազմակերպիչ-*

*ներն ու մանաւանդ
մարզիկները ներշնչը-
ւին ողիմպիական ոգիի
օրրան՝ Յունաստանի
մարզական եւ համա-
մարդկային սկզբունք-
ներու աւանդներէն:
Ոգին ու մարդը ամէն
ինչէ գերիվեր են եւ
մարդկային արժեքնե-
րու մէջ աւելի բարձր
բան չկայ, քան մարդը
ազնուացնող ոգին: Այդ
ոգին կարելի չէ ձեռք
ձգել դրամով, առեւ-
տուրով կամ այդ ար-
ժեքն իսկ իր բարձր մա-*

*կարդակին վրայ պահող որեւէ տուեա-
լով:*

**ԳՈՍԹԱՍ ՔՈՒՔՈՏԻՄՈՍԻ
ՅՈՒՇԱՆՈՒԵՐԸ ԵՒ ԽՕՍԸԸ**

*Երկրորդ յուշանուէրը, Հ.Մ.Ը.Մ-ի
Կեդրոնական վարչութեան անդամ*

FREDDY KARAGEUZIAN

"ONNIG OF CAIRO"
Egyptian Museum

Tahrir Square - Cairo

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net



եղբ․ Հրաչ Տէր Սարգիսեանի ձեռամբ, փոխանցուեցաւ Յունաստանի մարմնամարզի նախարարութեան ընդհանուր քարտուղար Գոսթաս Քուքոտիմոսին, որ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած պատիւին համար եւ ամփոփ պատմականը կատարեց մարզախաղերու կազմակերպական աշխատանքներուն:

Քուքոտիմոս յիշեցուց ներքին գործոց նախարարին մեծ օժանդակութիւնը խաղերուն եւ գնահատանքի մասնաւոր խօսք ուղղեց մարզախաղերու կազմակերպման մասնակցած անձանց իր կամաւորներուն:

ՅՈՒՇԱՆՈՒԷՐՆԵՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱՅԼ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐՈՒ

Յուշանուէրներու շարքը երկար էր: Երեք այլ յուշանուէրներ նախատեսուած էին Յունաստանի վարչապետ եւ մշակոյթի նախարար Գոսթաս Գարամանլիսին, մարմնամարզի նախարար Եորդոս Օրֆանոսին եւ մշակոյթի փոխ նախարար Ֆանի Փալի-Ֆեթրալիսին:

Յուշանուէրները փոխանցուեցան Գոսթաս Քուքոտիմոսին, զանոնք ենթականերուն փոխանցելու համար:

ԱՅՈՅՏԵԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԵՒ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐԸ

Հասաւ պարգեւատրումներու սպասուած պահը: Յաջորդաբար դաշտ ներկայացան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներու ձեռամբ իրենց բաժակներն ու մետալները ստացան պասքեթպոլի, վոլիպոլի տղոց ու աղջկանց ախոյեան խումբերը եւ լողի 19 մրցումներուն առաջնակարգ դիրքեր գրաւած մարզիկ-մարզիկուհիները:

Պասքեթպոլի պարագային, ախոյեանական բաժակները գացին Արեւմտեան Միացեալ Նահանգներու տղոց եւ աղջկանց խումբերուն: Տղոց մրցումներուն, երկրորդ հանդիսացաւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ-ի խումբը, իսկ երրորդ՝ Յունաստանի խումբը: Աղջկանց մրցումներուն, երկրորդ հանդիսացաւ Յունաստանի խումբը, երրորդ՝ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ-ի խումբը:

Վոլիպոլի պարագային, տղոց առաջին եւ երկրորդ դիրքերը գրաւեցին Յունաստանի եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու խումբերը, իսկ աղջկանց երկու խումբերուն մրցակցութիւնը աւարտեցաւ Հարաւային Ամերիկայի յաղթանակով:

Մեծ խանդավառութիւն ստեղծեց լողի 19 մրցումներու ախոյեաններու մետալներուն բաշխումը: Արեւելեան Միացեալ Նահանգներու լողորդները «Հնձեցին» 16 ոսկի մետալներ, իսկ 3 ոսկի մետալներ այլ բաժին ինչպէս Արեւմտեան Միացեալ Նահանգներու լողորդներուն: Յատուկ յիշատակութեան արժանի էին Աշլի Պօղոսեանը (չորս ոսկի մետալ), Կրէկ եւ Րաֆֆի Կարապետեանները (երեքական ոսկի մետալ):

Տեղի ունեցաւ նաեւ յուշանուէրներու տուչութիւն՝ մարզախաղերու լաւագոյն մարզիկին, իրաւարարին, մարզիչին, վարչականին եւ տիպար մարզիկին: Լողի մրցումներու ընդհանուր արդիւնքներուն համար բաժակներ ստացան Արեւելեան Միացեալ Նահանգներու տղոց եւ աղջկանց խումբերը: Մարզախաղերու նախագահ «Ալպէր Շահինեանի բաժակ»ը տրուեցաւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին, մարզախաղերու ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւելուն համար:

Կատարուեցաւ նաեւ յուշանուէրներու փոխանակում՝ պատուիրակութիւններու պատասխանատուներուն միջեւ: Ապա, շնորհակալութիւն յայտնուեցաւ մարզախաղերու մաս-

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԴՐԳ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՍԱՒՈՐՈՒՄԸ

ՊԱՍՔԵԹՊՈՒ

- ՏՂԱՔ**
1. Արեւմտեան Մ. Ն.
 2. Թեհրան (Հ.Մ.Ա.Կ.)
 3. Յունաստան
 4. Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս
 5. Արեւելեան Մ. Ն.
 6. Աւստրալիա
 7. Հ.Մ.Ը.Մ.-Կամք (Ադեքսանդրիա)
 8. Գանատա
 9. Հ.Մ.Ը.Մ.-Արաբատ (Գահիրէ)
 10. Հարաւային Ամերիկա

- ԱՂԶԻԿՆԵՐ**
1. Արեւմտեան Մ. Ն.
 2. Յունաստան
 3. Թեհրան (Հ.Մ.Ա.Կ.)
 4. Լիբանան
 5. Աւստրալիա
 6. Գանատա

ՎՈՒԹՊՈՒ

- ՏՂԱՔ**
1. Յունաստան
 2. Արեւմտեան Մ. Ն.
 3. Արեւելեան Մ. Ն.
 4. Պուկարիա

- ԱՂԶԻԿՆԵՐ**
1. Հարաւային Ամերիկա
 2. Արեւելեան Մ. Ն.



նակից մարզիկ-մարզիկուհիներուն եւ շրջանի ոստիկանապետ Տիմիթրի Սթամաթաքոսի:

ՓԱԿԱՆ ԽՕՍՔԵՐԸ

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով հայերէնով եւ յունարէնով խօսքեր արտասանեցին եղբայրներ Հրաչ Տէր Սարգիսեան եւ Վահրամ Դանիէլեան: Եղբայրները շնորհակալութիւն յայտնեցին Յունաստանի, Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի ընտանիքին եւ յունահայ գաղութին՝ իրենց ցուցաբերած հիւրասիրութեան եւ բարեկամութեան համար: Անոնք նաեւ շնորհակալութիւն յայտնեցին բոլոր մարզիկներուն:

Եղբայրներուն խօսքերը վերջ գտան համա-Հ.Մ.Ը.Մ-ական ծրգ մարզախաղերուն դարձեալ հանդիպելու խոստումով:

Օրուան հանդիսավար քոյր Մարի Եղիշեան, իր կարգին, յայտարարեց, թէ Աթէնքի մարզախաղերը այլեւս կը պատկանին անցեալին եւ այս մարզախաղերէն ձեռք բերուած փորձառութիւնը պիտի ծառայէ ապագային աւելի յաջող մարզախաղեր կազմակերպելու:



ԳՐՈՇԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅՏԵՍՈՒԹԵԱՆ ՕՂԱԿԸ

Հանդիսութիւնը փակուեցաւ դրօշակի արարողութեամբ: Հ.Մ.Ը.Մ-ի, Հայաստանի եւ Յունաստանի քայքայներուն կատարումով ձողերէն վար իջան ութ օր շարունակ ծածանած համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերու, Հ.Մ.Ը.Մ-ի, Հայաստանի եւ Յունաստանի դրօշները:

Յաջորդեց խանդավառ հրավառութիւն եւ մարզադաշտը ողողուեցաւ գունազարդ եւ շողշողուն փայլերով:

Կը մնար ամէնէն յուզիչ բաժինը՝ բաժանումը: Մարզախաղերու մասնակից մարզիկ-մարզիկուհիները, սկստական շարքերու հետ, ողողեցին մարզադաշտը, օղակ մը կազմած՝ երգելով «Յտեսութիւն»ը:

Ողջագուրումներ, գիրկընդխառնումներ, ժամադրութիւն՝ 4 տարի վերջ, համա-Հ.Մ.Ը.Մ-ական ծրգ մարզախաղերուն դարձեալ տեսնուելու յոյսով:

**Jewelry Burs from FOX! All shapes, all sizes!
Here are just a few!**



2245 E. Colorado Blvd. 104-240
Pasadena, CA 91107 USA
arak@foxburs.com



Contact: ARA KHATCHIKIAN
Tel: 626-791-4327
Fax: 626-791-0866

The Diamonds' Choice



ՅԱՆՈՒՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ)

Կարպիս Գույունճեան ԱԹԷՆՔ

Սփիւռքահայ կեանքին մէջ եղած են միութիւններ եւ կազմակերպութիւններ, որոնք գաղափարական կայուն հիմերու եւ մանաւանդ ազգանուէր նպատակներու հետամուտ չըլլալով, յոգնած, ծերացած եւ կազմալուծուած են:

Եղած են ուրիշներ ալ, որոնք տարւէ-տարի աւելի աշխուժացած եւ յաւելեալ գիտակցութեամբ տարած են ազգասիրական պարտաւորութիւններ, ու բազմապատկելով իրենց ճիգերը, ջանացած են բան մը աւելի տալ իրենց ժողովուրդին:

Յաւէտ երիտասարդ մեր կազմակերպութիւններու շարքին, Հ.Մ.Ը.Մ.ը ունի իր կարեւոր տեղը:

Սփիւռքի տարածքին բազմաթիւ ու բազմազան միութեանց կարգին, մարզական մեր մեծագոյն կազմակերպութիւնն է Հ.Մ.Ը.Մ.ը, որ տարիներու յամառ պայքարով անկորնչելի իրաւունք ձեռք ձգած է հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը, յանուն ընդհանրական գաղափարին, իր գոյութեան նախապայմանները հանդիսացող բոլոր տուեալները խտացուցած է իր մէջ: Արդարեւ, հազուադէպ են մարզական միութիւնները, որոնք 87 տարի շարունակ ընթացած ըլլան հիմնական առաջադրանքներով: Մանաւանդ մեր օրերուն, երբ մարզական միութիւնները մեծ մասամբ վերածուած են արհեստավարժ միութիւններու, իսկ մարզիկները՝ վարձատրուող արհեստավարժներու:

Սեզի նման փոքր ժողովուրդի մը համար, հրաշքի համագօր բան մը եղաւ 87 տարիներ շարունակ, առանց շեղելու հիմնական նպատակէն, առաջադրանքներու պատուանդանին վրայ պահել մարզական միութիւն մը, ինչպէս՝ Հ.Մ.Ը.Մ.ը:

Գոյութեան այս գաղտնիքը ոչ մէկ կասկած, որ պահած են անոր հիմնադիրներուն գաղափարական համոզումները:

Կ'ըսեն թէ Հ.Մ.Ը.Մ.ը առաւելաբար մարմնակրթական կազմակերպութիւն մըն է, այս բոլորին մէջ սակայն, մարմինը պարզ միջոց մըն է, որպէսզի ստեղծուի կամքի միացում ու համադրում, որ իր կարգին միջոց մըն է, որպէսզի հայ ժողովուրդը քայլ իր ճակատագրին արահետներէն:

Անցնող 87 տարիներուն, բազմաթիւ այլ միութիւններ



ծնան, ապրիլ փորձեցին, բայց կորսուեցան, Հ.Մ.Ը.Մ.ը սակայն յարատեւեց իր ժողովուրդին հետ:

Մարզանքը, մարմնամարզը եւ սկաուտութիւնը ազգի մը առողջ գաւակներ ունենալու անհրաժեշտ նախապայմաններ են: Ամէն զոհողութիւն յանձն առնելով, Հ.Մ.Ը.Մ.ը կը ջանայ հասնիլ իր նպատակին: Ազգապահպանման պայքարին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը կը հանդիսանայ մեր կարեւորագոյն ազդակներէն մէկը: Ան կը կերտէ առողջ մարմնով եւ տոկուն նկարագրով հայր: Բոլոր գաղութներու մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը ամրակուռ ու հայ անունին պատիւ բերող կազմակերպութիւն մըն է:

Այսօր, պետութիւնները անխտիր, մարմնակրթանքը ազգայնացուցած եւ նիւթական լայն միջոցներ յատկացուցած են անոր: Հ.Մ.Ը.Մ.ը ազգապահպանման անհրաժեշտ կազմակերպութիւն մըն է: Տարիներ շարունակ, ան իր բոլոր ճիւղաւորումներով հայ իրականութեան մէջ գործած է ու կը գործէ արդիւնաւէտ կերպով, մանաւանդ ցեղի ֆիզիքական առողջ ու կենսատու մարզին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը կարողացած է խլել փառքի ու յաղթանակի դափնիներ, արժանաբար հայոց ազգը փառաւորելով յաչս օտարներուն:

Նման կազմակերպութիւն մը բնականաբար արժանի է համազգային սիրոյ եւ գուրգուրանքի:

Իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը կը պահանջէ բարձրանալ միշտ աննահանջ, յարատեւ ճիգերով եւ անշահախնդիր զոհողութեամբ նուաճել բարձունքներ՝ առանց ընկրկումի, անխախտ կամքով ու անսասան հաւատքով, մանաւանդ մեզ հիւրընկալող ժողովուրդներուն ճանչցելով հայութիւնը, եւ այդ՝ մարզադաշտերու վրայ բարձր պահելով հայութեան անունն ու պատիւը:

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ» ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամներու դրութիւն մը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ: «Մարզիկ»ի «Քաջալեր անդամներն են»-

●ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Չարլի Կայեան, Վարանդ Մելքոնեան, Հ.Մ.Ը.Մ.ի վեթերան ֆութպոլիստներ, Արեւմտեան Մ. Նահանգներու Ալգոյաին Առաջնորդարան, Ժիրայր Սարգիսեան, Ալպէր Շահինեան, Օրէյնձ Քաունթիի «Սարդարապատ» մասնաճիւղ, Պրրպէնքի «Սիփան» մասնաճիւղ, Տրեյնտի «Սասուն» մասնաճիւղ, Լա Քրեսենթայի «Շանթ» մասնաճիւղ, Լոս Անճելըսի մասնաճիւղ, Փասատինայի «Ալատամարտ» մասնաճիւղ, Սան Տրանսիսքոյի մասնաճիւղ, Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ, Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ, Ինլընտ Էմփայրի «Արալ» մասնաճիւղ, Վէյլի «Մասիս» մասնաճիւղ, Վաչէ Սողոմոնեան, Վիգէն Արէլեան, Յարութ Մատէյեան, Էնտի Անտոնեան, Վահագ Թովմասեան, Սաութ Պէյի «Արա-

գաձ» մասնաճիւղ, Ճո Սամուէլեան, Վարդգէս Ալահայտոյեան, Վարդգէս Արապեան, Գէորգ Ալթունեան, Գօգօ Պալեան, Աբօ Սաղտրճեան, Վահէ Թաշճեան, Դաւիթ եւ Տաճատ Երէցեաններ, Մի ոմն, Հ.Յ.Դ. «Արմէն Գարօ» կոմիտէ, Վիգէն Դաւիթեան, Սաօ Կարապետեան, Խաչիկ Հաւաթեան, Կարպիս Հինտոյեան, Արմանտ Քիլիճեան, Էմիլ Մաղաքեան, Վահէ Մանուշակեան, Գօգօ Մկրեան, Վարուժ Միրչայեան, Մոնթեպելլոյի մասնաճիւղ, Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղ, Կարպիս Էօլմէսէքեան, Սաօ Թաթիկեան, Վիգէն Եփրեմեան եւ Յարութ Մարաշլեան:

●ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Վահրամ Դանիէլեան, Ռոստոմ ճէվահիրճեան, Չարեհ Յարութիւնեան, Չարեհ Գարակիւլլէեան, Ժագ Քէշիշեան, Բաֆֆի Տօնապետեան, Մարսէլ Գարեան, Վարդգէս Թոքաթլեան, Յակոբ Թոքաթլեան, Վալգէն Լախոյեան, Պետօ եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Պետիկ Տէր Վարդանեան, Արա Պարսումեան, Կարպիս Պարսումեան, Ռազմիկ Փանոսեան, Թորոս Ոսպիկեան, Պոսթընի մասնաճիւղ եւ Կերի Յովակիմեան:

- ԳԱՆԱՏԱՅԷՆ Կարապետ Ն. Թոփճեան:
- ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ճորձ Տաքէսեան:

With the compliments of

Restaurant Al-Mayass

